

35

Handwritten text on a white label, likely a library or archival entry. The text is written in a cursive script and includes a date at the bottom: 12/8/1882.

469

21



ՄԵՂԵՂԻՔ ՏԱՂՔ

ԵՒ

Ե Բ Գ Թ

N 106 119

ՀԱՌԱՔԵՑ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎԱՐԳԱՊԵՏ ՏԷՎԿԱՆՑ

ՈՒՆՏԵՆ ՎԱՐԱԳՆՑ

N 181. Զ. Գր. Ե

Թ Ի Ն Լ Ի Ս

ՅՈՎ. ՀՈՆՆԵՐԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՆԵՐԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԵՆԼԵՆՆ ԳՈՂՈՅ, 5

1883

469-662

2911-99

S-52

uy



ՄԵՂԵԴԻՔԻ ՏԱՂԻ

Ե Ի

Ե Բ Գ Դ

1010
413/3

ՀԱՌԱՔԵԱՅ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵԱՅ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎԱՐԳԱՊԵՏ ՏԵՎԿԱՆՅ

ՈՒՆՏԷՆ ՎԱՐԱԳԱՅ

N 181 2. օր. Ե.

N 106 m. d

2001.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԲԵԼԵՆՆ ՓՈՂՈՅ, 5

1882

ՊՐԻՆՏ

ԳՐԱՆԻՇԱՆ

13

† Երմաւ եւր Հօրն Յարութիւն Տէվիանց վախճանեալ 1858 և Մօրն Նազեւելոյն Անթառամ Զրուանդեանց 1841

Սփռէ կարօտով Հոգւոյ Հայերգս ի սրտանց Որդին Հինգերորդ իրենց կաթին երախտապարտ Անձուաց յիշատակ:



Дозволено цензурою. Тифлисъ. 5 Мая 1882 г.
Типография И. Мартиросянца. Орбеліан. ул., 5.

մայրս յ' մայրամեջս' սուտար յ' մեքմբոյ զգո յիցար
արմանդան յ' մ' սքոան յ' մայրացարտս' սքոյի զի՛
արա' սքոան յ' լրանա' սքոյի յ' լրանմոս' մ' զ՛
-գեղեկ մ' մ' մ' սո սքոայ մ' իրարայ զս յուտայ' մ' ի լրար
-սոյ զս մ' մ' սո սքոայ մ' իրարայ զս յուտայ' մ' ի լրար
յ' մ' իրար' սքոյի յ' լրանմոս' մ' զ՛
-սքոան յ' մ' սքոան յ' մայրացարտս' սքոյի զի՛

Ն Ա Խ Ե Ր Գ

Ո՛վ կարգաց առանց սրտագալար տոչորման մեր Ազգային Վէպերու մէկ-երկու Հատակտորներն և իւր ականողիքն զսպեց' որ կարմիր ու դառն արտատունքով չողողէ իւր սիրտն ու զգացում, իւր լանջն ու ճակատը, նկատելով անոնց պակասիլն ու կորուստը...: Ո՛ր զգայուն Հոգին մըմնջեց մեր Ազգային մնացած քանիմ կտոր փշուր երգն ու նուազն բիւրաղի, Գողթման Երգիչներաց չնկեւէն թախած մեղրանուշ բանք ու եղանակք, որք Հաղար տարիէն ետքը, Հաղար ու մէկ կտոր լինելէն վերջ անգամ. դեռ ընդ մեզ շատերու ուշին ու աղիք, սիրտն ու Հոգին կցափշտակեն իրենց անթառամ լարովն ու տամով և քաղցուենի Համովն ու Հոտով, որոնք քանի Հնանան, այնքան կաղնուանան. քանի ճմլուլն այնքան ազդու կըուրեն, ի Հոտ անուշ քնքուշ երգասէրներու...:

Ուլմպոս անուանի լեռն և նորա գեղն, իւր պուէտիկոսներու խմած մեղրամած օշարակն ու նեկտարն, պիտի կրնամք մըցել մեր նախնի Բարձր Հայոց բարձանց, Քամախու Հովտաց, Բիւրական սարերաց ծաղկածուփ վայրաց քան զմեղրն անուշ ջրերաց, Վարագայ սարի սիրատուն աղբերաց և նազելի ծաղիկներաց, որոնցմով մկրտուած Հայերգք, որք կտուց կտցի տուին սոխակին, երես երեսի մանուշակին, Հասակ Հասակ գինէրբուին. վարդով նարիկիով, զանազան ծաղկանց Հոլլերով սպիտակ սրտի տակ կեցած, ալ ու կարմիր, կանանչ, կապուտ, թուխ ու փուխր ծաղկանց շաղովն ու ցօղով լուացուած, կաթնով ու մեղրով շաղախուած ու զարգացած. Հայ Աշուղներու դիւթիւ տաղերաց Հետ պայ-

քարել, որք երգեցին ի դաւառս Գողթնական, ի սքանչելի վայրս Վասպուրական, ի մարզս և ի մարմանդս Հեր և Ձարեանդ, ի ծովակս Վանայ, ի ծմակս Վարագայ և Արտասայ, որ քաղցրէն քաղցր աւելն և թրթրուում տուին Հայ մուգալի սրտացուցիչ սաղին. որ իսպառ զմայլած երգեն Սոխակն ի վարդ. Նարեկէսն ի սէրս, Անահիտն ի հովիտս. Վարդամատն ի մարմանդ, Ոսկիամայրն յոսկեհանս լերանց Հայոց, ի յոսկունս Բիւրականս. ի ծաղկազարդ վայելչութեան, Հրահանգել թռվուռն պարասէր, ծաղկասէր, սրտասէր, և երգասէր Հայ Աշուղներուն, որոցմով սգևորուէր ոսկեզարեան ոսկեհատ և սիրատարփ բանաստեղծներունուազն ու ջութակ: Ո՞վ չգիտեր, որ մեր ՀԱՅՏԵՐԻՔ պէս պէս գոյներով իրենց փուխը ու տխուր բամբուկը Հաղարումէկ մելամաղձիկ տապերով ու սերով թաթաղուն չողեցին ընդ դարս դարս և այն բեր Հաղար սրտի սիրալին առարկաներու վերաբերմամբ, բեր Հաղար նաղերով, ու սաղերով, և անդրքան զբեր ուրորուն ու սիրուն ոսկեզալար ծալքերով, ուր՝ որ թեքուեցաւ իրենց անշուժն ու կրակ կտրած փափագն, ուր որ իրենց սէր տարաւ, սիրտ տարաւ, ի նաղ, ի վաղ, եղանց ու եղջերուաց. Մասեաց սարէն իջած սալիկն, մշակներու խաղն ու քելշտիկ, ծառն ու ծաղիկ, դարն ու տափ, կափն ու ծափ, շէն շէն ու լէն լէն շինից ու քաղաքաց խուռն ու խօբօտն, ուր իրենց նաղելի Սաթենիկն, և ուր որ իրենց սիրատենչ Արտաշէսներ գրկեցին, գրաւեցին, յափշտակեցին մեր Հին Հայ, այլ մշտ նոր աշուղներաց սիրալառ խնձիղն ու իղձ, որպէս սիրտ ու հոգի. կամ մարգարիտ Հարսի, և որպէս թագ ոսկեկուռ Հայրենեաց ծաղիկ փեսայի գլուխ Հիւսուած, որ առէն տեղ մարգարիտ տեղալը ի Հարսնութեան Սաթենիկան և տեղ ոսկի տեղալը ի փեսայութեան Արտաշէսի...:

Մեր նախնի սիրասէր ժողովուրդն, ում Համար՝ որ ինչպէս կըսուի, գեր ու գրեչ չունէր երբեմն. այլ սա-

կայն բերանացի սորուած իւր Աղգային կարևոր շարն ու Շարական ու անջինջ դրոշմուած ունէր իւր աստուածագիծ լանջաց շէն ու լէն անմահ տախտակի վերայ իւր ՀԱՅՏԵՐԻՔՆ, ու կերգէր իւր թէ ուրախութեան և թէ տրտմութեան պահուն, Ալանաց փափուկ օրիորդին նազն ու տնազն, նորա շեկափով պարանն. ու անդատարափ մարգարեան Հարսնեկան: Միւսին Հուր Հերն, ու արեգակն աչեր, և որպէս մարգարետ և իր և անգին ակներ կպահէր յատկապէս իմասնատուի իւր սերածուփն հողուոյ, ուր կծլէր ու կծաղլէր երթալով ու մնալով, և այն Հաղարաւոր սևաւոր տարիներ անցնելէն ետք, կուգար կհասնէր Մշոյ Խօրօսից Հօր Ժամանակ, որ թրթրալով և հալիւ ճորով խելով սպառիչ Ժամանակի Ժանգէն, մեղկնուրէր իւր չնաշխարհիկ Պատմութեան Հետ, և անոնցմով կփողփողէր ու կտուգէր իւր պատմական գործըն որոյ մէջ կփայլէ իր առածին պէս. որպէս սարգիտն չեռեալ ընդ մարգարետ, մնալով պսակ ի գլուխ շնորհաշուք Հայրենեաց, որն որ արդէն իւր ամբողջ Բանաստեղծական, Բիւանական և Մեհենական մատեններ միամտաբար իւր խոսական ձեռքով թաղած էր ի Բէթղէհէմ ծաղկած կարմիր խաչին ներքև, ի ցաւ ապագայ Հայ սերնդեան, որուն անդարմանելի կսկիծն ու մըմուռ երթալով խոր կազդէ ամբողջ Բանասէր Հայու սրտին, ոյց Համար գրեթէ տասնև Հինգ դարէ ի վեր կմորմնքի մեր ծովածուփ կարօտ սրտեր. կարօտով մեր Հայկական այնքան անստղիւտ Հնութեանց՝ որոց Համար լաց կուլանք անհատաբար...:

Երէկ չէ չեռանդն, իմ սիրասուն եղբայրներէն մէկն ինձ կատեր. «սապայ տղի պէս նստել. լաց ու ողբալ ես սորուեր»: շատ իրաւացի է. զի մենք տասնև Հինգ դարէ ի վեր նստեր կուց կուց արտասունք կուլանք ու կասենք ափսոս, Հաղար ափսոս մեր Աղգային պատուական Հնութիւններն գնացին կորան, և...: Ո՞ր հոյս, ո՞ր խումբ ո՞ր միութիւն, ո՞ր ընկերու-

Թիւն, ո՞ր ուժ կամ—վարչութիւն կամեցաւ մեր տոհմական արօցն ու բարօց, խէքաթն ու զրօց, երգն ու ցցօց, աւանդական առածք, հանելուկք, նուազք ու չիշատակարանք, հնութիւնք և տարեգրութիւնք, ժամանակավէպք, նամակք, արձանագրութիւնք ժողովելու գործն ունեցաւ, եթէ ոչ մի քանի մասնաւոր անհատք, որք դժբաղդաբար առանց գնահատելի մնալով ցաւի սերտ մնացին ու գնացին իւրեանց ծաղկահաւաք պէտքով թաղուեցան և հող և ի մոխիր մոռացութեան տրամութեամբ:

Իրաւ է որ մենք շատ, ու շատէն շատ օսկեծղի անուաններով պճնուած խումբեր ունեցեր և ունինք դեռ ևս, այլ սակայն ուր է իրենց գործն ու փորձ, ուր է իրենց արիքն ու բարիք, արդիւնք ու արդասիք, ուր են մեր արդի գրական հերոսներու ձեռնարկն ու բաստ, և ուր են մեր ազգասէրներ, որ եղբայրական ձեռք տան, ուժ տան, սիրտ տան մեղուաջան մշակներուն, որ մեր նախնեաց ընտիր ընտիր ձեռագիր մատենաներ հաւաքեն, կիտրոնացնեն, տեղ տեղ գրադարաններ հաստատեն, որ օտարն չտանէ զանոնք ու իրեն անձնական շահուն չգործածէ, և նոցա պարունակութեան հական կէտերն ըստ քմաց չխեղաթիւրէ: Քանի տարի չառաջ Կ. Պոլիս գտնուած միջօցիս Մեհրդատեսոնցի հարիւրաւոր ձեռագիրներն տեսած եմ. այժմ նա մեռած է, ուր է իւր գիրքերն...: Ժումմ առաջ Գլահայ վանք նոյնպէս շատ հատորներով հին ձեռագիրք կային վերջերս ես հոն գիպեցայ, հատ մի չկար: Ուր թողումք հին Հայաստանի բաղմաթիւ գաւառներ, և անթիւ նորա մէն մի գիւղերն, ուր սպասածէն աւելի գրեանք կան, որ երթալով իսպառ պիտի փշանան, հող մոխիր դառնան:

Մեր ուխտի եղբայրներէն տէր Ղևանդ վ. Փիւրղաւմեանն, որ քանիմ տարի առաջ Վանայ սահմանին մէջ Բէլու անուն գեղ գնալով ձեռագիր գրեանք տեսեր եկեղեցին գրուած մեծ վանդակովմ, և նոյներու

չիշատակարաններ գրած էր, ուր կային և իմ մասնաճուղիս վերաբերեալ շատ հատուածներ, ոյց համար գնացի որպէսզի հաւաքեմ, բայց աւանդերիւս կտոր ձեռագրէն աւելի բան չկային, (Նարեկ և Ասմաուրք) սպառած էին, և շարս օրօց կպատմէ չիշեալ Հ. Ղևանդ որ Մագաղաթեայ երկաթագիր Ագանթանգեղոս մի կար, որոյ մէջ դաշանց թղթի գիծմ՝ անգամ չկար և այլն...:

Ես՝ որ Յունաստանի մէկ մաս, և Հայաստանի գրէթէ մեծ մասն ճանապարհորդութիւն ըրած եմ կրկնակի կերպով և կրկին պաշտօնով, իմօտոյ շատ լաւ նկատած եմ որ Աղգային ձեռագիրներ ետ ընդ ետ մաշելու, կորսուելու վերայ են, և եթէ տակաւին իրենց նախնի դրութեամբ մնան. թերևս քառօրդ դարէն ետք մէկ հարիւրերորդն չի մնար: Զի՞ հուր ի սիրտ ստիպուած եմ ասել որ, չախնէ յանուանէ մէկ—երկու յիմարներ կճաճաչեմ, որք հարիւրաւոր ձեռագիրք մեռեալներու հետ ի շիրիմ թաղած, և որպէս բարեպաշտական գործ մի համարելով, կազմեր քաղուած գրքեր տարեր, թաղեր են ի լեռ և ի կղզիս որ այս կողմ՝ այն կողմ չցրուին, ու իրենց բարեպաշտ զգացման, կամ հաւատքին չդիպնեն: Քանի քանի տեղ, քանի քանի գրտնուած նկարք, պատկերք և թռչնագիրներ, տղայոց ձեռք կտրտուած խաղալիք էին եղեր: Ահ չեմ կրնար սրտիս ծալքերն բանալ, մորմօք զլս կմեռցունէ, զի մեր անդարմանելի և անդառնալի վնասներ նկատելով կեանքս կռքեանայ եռալով ի տապ սիրոյ գեղեցկութեան նախնի հարց հատնտիր հնութեանց, որոնք տեսնողի ուշի կքաղեն, խելքն կխլեն իրենց կիրթ ու փափուկ ճաշակովն, որոց նկարն ու պատկերք, գիրն ու փափուկ գրիչ գիտեն վտտահ կերպով մրցիլ դաււոյս ամենաընտիր վրձիններու հետ, իրենց հազարամեայ հնութեամբ, և անխնամ դրութեամբն իսկ, միանգամ և միշտ չաղթութեան դափնին իրենց կողմ շահելով, և վարձ իրենց անմահ արհեստին:

Ես այնքան երկարամեայ շրջագայութեանս մի-

ընդին ժողոված, ինչպէս նաև ընդօրինակած ունիմ յետագայ քանիմ կարևոր գործեր.

1. Պատմութիւն և Շարահարգութիւն Կաթողիկոսացն Հայոց. աշխատասիրութիւն Նիքիմ Կաթողիկոսի ժամանակագրութեամբ, սկսուած սուրբ Լուսաւորէն մինչև ի Ներսէս շինող:

2. Թուղթ Սիմէօն Կաթողիկոսի Տանն Կելեկիոյ, ի պատասխանի թղթւոյն զոր կուղարկէ. Փրիպպոս Կաթողիկոսն Վաղարշապատու:

3. Ընդհանրական դեր Վասպուրականի Հայոց, առ Տէր Սեւքիսէթ Կաթողիկոսն էջմիածնի:

4. Ներբող Բողոյ Խաչին, ոսկեղինիկ գրչութիւն նախնեաց:

5. Գործ և փորձ նախնի Հայ բժշկաց: Եւ բնական դեղորայք և գործ նախնեաց. և Հիճրէի ասածք:

6. Ժամանակագրութիւն Յակոբայ Երեցու. իննեւերորդ գարէն մինչև տասնումէկ դարու վերջ:

7. Նոյն Հեղինակի գրած Կարնոյ. կամ Բարձր Հայոց Աշխարհագրութիւն լի տեղեկութեամբ:

8. Մանր վէպեր և ժողովրդական Առակք:

9. Մեր Ազգացին անտիպ մատեաններէն. սկսեալ Ներսէս Ծնորդալու օրէն մինչև մեզմէ մէկ դար առաջ գրուած անծանօթ Երգեր. որոցմէ մի բունն այս անգամ հրատարակեցի:

10. Մխիթար Վարդապետի (Սասունցի) Երկասիրութիւն:

11. Եւագրի Վարք և Բարոյախօսութիւն:

12. Յովսէփի (Սեբաստացի) Սարկաւագի ամբողջ տաղաչափութիւն:

13. Մագաղաթեայ Մայր Մաշտոցմ' (որուն մէջ թագաւորօժէք և մեռնն Սրհնէքէն զատ, կայ նա և ամենակարևոր Հատուածներ, և հրահանգներ):

14. Սահրատ Շէհրիմանեանցի բանասիրութիւն:

15. Նախնեաց Նշանագիրներ, և Սղագրութիւն:

16. Գրեգոր Մագիստրոսի ամբողջ, Երգեր, Նամակներ և այլ երկասիրութիւնք:

Իսկ իմ երկասիրածներս են,

Ա. Այցելութիւն ի Հայաստան:

Բ. Պանտուխ Վանեցոյ ժողովրդական Նամակներ, Վէպեր. Շատխու Գիտոսիկ, Կաճետու ծուեր, Երգեր Առակներ, Առեղծուածներ և Անպատկամութ: Սոքա, և այլ որ ասոնց կարգին, երկար տարիներ տառապակիր աշխատութեամբ ժողոված եմ բազմաթիւ քաղաքաց և գիւղօրէկց մութն ու խորք քունջերու հող — մոխրէն — որպէս սիրահար՝ տնրփաւոր, անբուն, անդատար անհանգիստ երբեմն և անօթեան, չայնժամ՝ երբ տարերքն անգամ կըպայքարէին ընդիս: Այլ ս'վ կրնար իմ երգասէր և բերասէր սիրտն զսպել, որ մտացեր էր էւր դէմն ելած անակնկալ խութն ու խոչեր, որ կըսրախուսուէր իւր ընտրած սիրելի նպատակովն, ժողովել մեր ամենասիրելի Հայրենիքն անթառամ երգոց փշրանքներ, նորս անմահ Մուղալից կտոր փշուր թելեր, (Շարական, Սեղեղի, Գանձ, Տաղ և Երգեր) : Եվ կրնայ այն մասին մեր ծովայոց սրտի փափախումն նկարագրել, արտասուք կուռչինք այն Մագաղաթի Հին կտորն ուր թէ բանմ', բառմ', տմոմ', կարդալու համար գոնէ. զի շատերն աննթեռնելի էին, քունած ու սկացած դարաւոր ժամանակաժանգով ոյց վերայ հը տառմ' որ կերեկէ, անհ կասէինք իւրովի, ս'վ գիտէ Ազգացին ինչ անծանօթ վէպի կտոր մի է, և երբ տեղ տեղ կ' կարդայինք միայն Հայրենիք, Ազգ, Պատմութիւն, չայնժամ կուռեւնար մեր լանջն ու կ'թրթուար մեր լթարթափն ու թոք անհ հիմայ գտանք մեր նախնեաց կորուած պատմութիւններէն մին...:

Ահա այսպէս ուրեմն մոռնալով մեր օրն ու աստուր, թուփի և թուփի, ծովի և ծովի, քաղաքի քաղաքի, գիւղի և գիւղի, տունի և տունի. և անկիւնի չանկիւն սուրբալով, յուգուելով և խուղելով հետամտեցանք ժո-

ղովել և ինչ որ կրցինք ձեռք բերել, արհամարհելով տապն ու տագնապ, ամպն ու արև, ճանապարհն ու առապար, սարն ու անտառ, յուղիահար քրդացն ու աւազակաց սառսուռն ու սարոսափ, անձրև, կարիւտ և ջրադարձն, որ քան զամէն աւելի անօրինակ կերպով կ'տառապեցունէր և կ'լարհուրեցունէր զմեզ: Քանի քանի անգամ մենք բաց մնացինք անշէն տեղեր, և ցուրդ ու ձմեռ ժամանակներ. ու կ'ճնշուէինք չէ թէ անոնց խստութենէն. այլ մեր զգացումէն, որ տակնապ կ'կրէր, թէ մի գուցէ թըչուին, ու լիկուին մեր ծաղկանց հաւաքածոյքն. ուստի մենք մերկ ու բաց կ'մնայինք, ու զանոնք կ'պաշտպանէինք. քան զմեր հոգին աւելի սրտադին կերպով, զի շատ լաւ գիտէինք, եթէ դժբաղդաբար կորսուէին կամ վնասուէին մեր գրեթէ. այլ ևս յոյս չկար, որ կրկին կրնայինք դանոնք ժամանակէմ ետք ձեռք բերել, զի ինչպէս ասինք. թէ մերայնոց ձեռքով վատնուած կ'լինէին անոնց բնագիւղներն, և թէ աւաղակ քրդաց ձեռքով կ'խողխողուէին: Զի սոքա երբ տներ և եկեղեցիք կ'մտնան կորոպտելու, աւետարանի և այլ գրքերի վրայի խաչեր կ'օպկեն. և երբ դժուարանան, հետեւնին կ'առնեն կտանեն և արծաթներն առնելէն ետք, մատեաններ կ'թրատեն, կտոր կտոր կ'անեն. որոց օրինակ ուզօղն կրնայ տեսնալ Վարագայ գրադարան, որք Սըրբաղան Հայրենի ժողովել տուաւ միջոցներս՝ մեր սիրելի եղբայրներէն՝ Վանիէլ Վարդապետին ձեռօք:

Բարձր գովութեան արժանի է այս մասին Փերդալմեան Տէր Ղևոնդ մեղուաջան Վարդապետն, որ գրէթէ քսան երկար տարիներէ ի վեր աշխատել է ժողովել, հաղարաւոր, Յիշատակարանք, ժամանակագրութիւնք, Տարեգրութիւնք, Արձանագիւղներ, Կոնդակներ, Նամակներ, և այլն որոնք Հայ գրասէրներուն հարուստնութիւն կ'մատակարարեն, և կ'նպաստեն Հայկական պատմութեան, Աշխարհագրութեան գեղագրութեան, Վանօրէից դրութեան, Տեղագրութեան, տիրող կառա-

ւարութեան եղծման և այլն բաղմաճիւղ առարկայից, որք մեր Ազգային Պատմութեան անհամեմատ փայլունութեամբ լոյս կրնան ցոլալ: Բաց ասոն, որ արժանի համակրանք չգտնալով առ այժմ իւր մեղքի քաղցրալիւր փէթակն շալկելով կ'գտունայ իր հայրենիք:

Իսկ ես բաղդ ունեցայ այս անգամ, երգոցս սոցն փոքրիկ կապոցն Թրակիոց թարմիկ հովտէն, Բիւզանդիոց փողփողուն աիւրէն, Տիգրիսի տառապեալ դաշտերէն և Վարագայ սարի համհարդ ու գեղանաղ Բիւրական թորակներէն սրտիս թելով փունջ կապելով մեր մտերիմ և սիրելի Ա. Յ. ին նուիրել, խոստանալով որ եթէ երկինք ինձ շնորհեց օդ շնչել կենաց և Լ'ս միւսանգամին, մեր Հայ Աշուղներաց բոլոր երգերն ու կենսագրութիւններն էլ բոլոր Աղբիս կ'ձօնեմ իբրև գրաւական իմ սիրոյն...:

Ծանօթութիւն.

Առ այժմս բաւական կ'համարեմ մէկ—երկու երգիչներու նկատմամբ ծանօթութիւն տալ, վերջնութեւր գիւղերու ցանկէն ետք, այն է Գրեգոր Աղթամարցոցն և աշղ Բուչակին) նկատմամբ, որոց մէկ մէկ երգն թէ ի Բաղմալէպն թէ ի Քնար Հայկական հրատարակուած են երբեմն և հրատարակիչք ծանօթութիւն չունենալով հեղինակի սիւք լինելուն. այլոց անուան վերագրեր են անոնց գործք:

Տասներորդ դարէն մինչև տասնութերորդ դար եղած մեր Ազգային երգերն ուշև ուշալ կարդացողն դուրաւ կ'հասկանայ որ երգիչներ, կամ տաղասացք՝ ընդ միշտ արտաքին ճնշումէն նեղուած և սեղմուած զգացումով և փոխարեութեամբ արտայայտած են իրենց ըզձակաթ ձութակին ձայն, նոցներն երգեր են միշտ Վարդ, Ծաղիկ, Նարկիզ, Բլբուլ, Աչք, Ծով, Սաք, Հով, Հովիտ, Աշուն, Գարուն, Զմեռ, և այլն սկսեալ արխարհականներէն մինչև բարձրաշտիճան հոգևորականք, որք մեծ մասամբ սիրահարական տաղեր տղել են զի սիւ կրնար իրենց սիրտ սեղմել, զգացումն

Ճնշել, որ սէր չերգէր, ծովածիւնի աչքն չտիրէր, ու
ասէր, ո՛հ Լին անուշ է ծափն ու ծաղիկ, սէրն ու
գինին:

Գրեգոր վարդապետ՝ Նարեկացի: Գրեգոր Մազիս-
տրոս իշխան: Գրեգոր փոքր (վկայասէր), Կաթուղիկոս:
Ներսէս Ծնորհալի. Հայրն Ներսէս Լամբրոնացի Վա-
թուղիկոս: Մխիթար վարդապետ, (Վանահայր Գօշայ
Վանից): Խաչատուր վարդապետ, Տարօնեցի (կամ Կե-
չառացի): Կոստանդին Կաթուղիկոս, Բարձրբերդցի:
Մկրտիչ վարդապետ, Կեչառացի, (վերջին շրջանն էր):
Հեթում Կիլիկեցի: Ծրեկ: Սրեկ Կոստանդ, Իրեգացի:
Գէորգ վարդապետ, Եղնիացի: Յովհաննէս (պլուղ)
վարդապետ, Ծործորեցի: Տէր Սաղաղայ, Ոստանցի:
Գրեգոր վարդապետ, Ռշտունցի: Դաւիթ վարդապետ,
Քուբարեցի: Օհան Խոյու Սլաթեցի, (Նահատակ): Գրե-
գոր վարդապետ, Խլաթեցի (Ծերենց): Առաքիչ Եպիս-
կոպոս, Սինեայ (Քուեր որդի մեծ վարժապետին Գրե-
գորի Տաթևացոյ): Մատթէոս վարդապետ, երգիչ, ա-
շակերտ չլեւալ Գրեգորի: Ղաղար վարդապետ, Բաղի-
շեցի: Սինէօն վարդապետ, Բախուանցի, աշակերտ Կա-
խիկ Օհան վարդապետի: Մանուէլ վարդապետ. Պրճ-
նեցի: Մխիթար վարդապետ, Այրևանցի: Առաքիչ վար-
դապետ, Բաղիշեցի: Քրիստոսաատուր գրիչ: Արևատակէս
վարդապետ, Խեղանցի: Մարտիրոս վարդապետ, Կիլի-
կեցի: Գրեգոր Կեչառեցի: Մարդիս վարդապետ Սոր-
փեցի: Մկրտիչ (Նաղաշ) Եպիսկոպոս. Առաջնորդ Ամ-
թայ, Պոռեցի: Ատոմ Էրէց, Վարազեցի: Յակոբ Եպիս-
կոպոս՝ (Նետրարենց). Սրճիկեցի: Մովսէս քահանայ,
Արժիկեցի: Անդրէաս վարդապետ, Արզելանցի: Մինա-
սենց Թովմայ վարդապետ, Աղթամարցի (որ անտիպ
տարեգիր մի ունի. տես ի Յիշատակարանս Ղ. վ. Փեր-
դալէմեանի): Յովհաննէս վարդապետ, Վանահայր Պը-
տուլիայ Վանից: Մատթէոս վարդապետ, Սեբաստացի:
Յովհաննէս Կաթուղիկոս Սըսոյ, Թուրքուրանցի: Տերա-
տուր վարդապետ: Կարապետ վարդապետ, Բաղիշեցի:

Պուտախ երգիչ, Մաղսրացի: Թորոս Էրգիչ: Գրեգոր
(Իմաստասէր Կաթուղիկոս.) Աղթամարի: Մարտիրոս
սարկաւազ, Վանեցի: Յովհաննէս քահանայ, Կոս-
տանդնուպօլսեցի: Յովասափ սարկաւազ, Ալեքստացի:
Զաքարիայ վարդապետ, Վարազեցի: Յովհաննէս վար-
դապետ. Քերովբենց Մոկացի: Զաքարեայ Եպիսկոպոս.
Գնունեցի: Ղուկաս վարդապետ, Իեղուացի: Խաչա-
տուր Գնունեցի: Մինաս Եւթոկեացի: Նահապետ Վար-
պետ (Մահանուն Քուչակ) Խառակոնսցի: Սինէօն վար-
դապետ. Ապարանցի: Զաքարեայ Կաթուղիկոս Սըսոյ,
Զուղայեցի: Սրապիտն Կաթուղիկոս, Ռուհայեցի: Մար-
տիրոս քահանայ, Խեղանցի: Ստեփաննոս քահանայ,
Եւթոկեացի: Ներսէս վարդապետ, (Պեխու) Վանա-
հայր Լիմ անապատի, Ասպընճուս գեղացի: Ստեփան-
նոս վարդապետ. Մոկացի: Սաֆար, Վանեցի: Մարտիրոս
սարկաւազ, Վանեցի: Աշուղ Քուչակ (Թոս մեծ վարպետ
Նահապետի) Խառակոնսցի: Խօճամիր, Վանեցի: Մար-
տիրոս վարդապետ, Կաթուղեցի: Սուքիաս վարդապետ,
(Նղիաղար Հոռոմիլայեցու աշակերտ,) Պրուսացի: Յով-
նաթան Նաղաշ: Մահակ դպիր: Տէր Գրեգոր (քահա-
նայ սուրբ Վարդան եկեղեցուց) Կալծակ Գալուստ
վարդապետ, (Պատրիարք Կոստանդնուպօլսոց): Տէր
Անտօն, Թեբայեցի: Սըսուլ Թորոս, Վանցի: Օհան (Կօ-
լոս) Պատրիարք, Բաղիշեցի: Յակոբ Պատրիարք (Աս-
տուածաբան) Զիմարացի: Կարապետ Պատրիարք, Երու-
սալէմի: Պետրոս վարդապետ, Ղափանցի: Տէր Մարիոս
(աւագ քահանայ) Արաբիերցի: Յակոբ վարդապետ (Նա-
հատակ,) Պատականցի: Թէոդորոս Կաթուղիկոս, Աղ-
թամարցի:

Սոյն քնարերգուաց անուններ այս ու այն ան-
տիպ գրեանց ու երգարաններէն հաւաքած են:

Աշըղ Քուչակ (Նահապետ) և Թոս. Քուչակ

Փառք ամենասուրբ Երրորդութեան... Քուչակ
անուն բարի մտական, որ ստացող եղև սորան:

Յիշեցէք գփուչակն և միւս կենակիցն Քանդաթունն: Գարձեալ չիշեցէք գփուչակն և մեծ պապն իւր Նահապետ վարպետն, որ մականունն աշղ ֆուչակ ասի, Գարձեալ չիշեցէք, որ ստացաւ զսայ (աւետարան) և ետ ի դուռն սուրբ Թէոդորոս զօրաւարին, ի ձեռն տէր Մելքեանթին...: Յիշեցէք զվերջին ստացող սորա, որ ստացաւ ի Հալալ ընչեց իւրոց ֆուչակն. ի Թուին Հայոց ՌՁՁ (1637): Եւ ես Ստեփաննոս Ձուղայեցի Նախաշ էրէցս Հանդիպեցայ Խառակոնիս...:

Խառակոնիս բաղմահայ գիւղ մի է ի Տոսպ գաւառն Վասպուրականի, Արջակայ լճակին արևելեան եզրն, և ֆուչակ աշղին, ու իւր պապ Նահապետ վարպետ աշուղին սեպհական գիւղն է, որք Թոռն և պապիկովն միասին Հոն Թաղուած են, և գերեղմանին իբրև ուխտատեղի Համարուած է տեղացւոցմէ:

Այս ծովական գիւղերն ի բուն երգն՝ Նահապետ վարպետ ֆուչակինն է, որ օրինակուած է ՌՒԱ (1583) ի Սեբաստեայ, և նոյն օրինակէն Հանած է կրկին ՌձՂԷ (1746) Թուին Պետրոս էրէցն, որ իւր կողմանէ կշաւելու վերջնթեր ծովական երգին սոյն երկտող ոտանաւորս,

Տէմիշ տէ իմիշ նուշի, Խէթասըղ օլմազ քելի:

Սէվտալէ տիւշէն քելի. նէ էյլէր օլ էշի, կիւճի:

Իսկ «կիւղէլ մի ես Իչակիւրիէ տեսի՞», այն Նահապետ ֆուչակի Թոռն ֆուչակին է, որ այլք անանուն Սարկուազիմ Կուտան, Թերևս չգիտնալով և սոյն վերջին ֆուչակ աշուղն ունի շատ երգեր, որ պատեհութիւն չունեցանք զանոնք ձեռք բերել այս անգամին:

Գրեգոր Կաթուղիկոս Աղթամարի.

Աստուած ողորմի ասացէք փոքր Գրեգորիս Կաթուղիկոսին, որ զարդարեաց աւետարանս Հրաշալի

ուկով և արծաթով, և ետ ի դուռն Խաչին Աղթամարաց, չիշատակ իւր և ծնողաց իւրոց Հօրն պարոն Սևտենին, և մօր Ղրիմ Խաթունին... և այլն բազում չիշատակ արար սա ի դուռն Խաչիս և ետ չորս արծաթէ սկիւհս. մեծ վառի խաչ մի և նորոգեաց զձրման ժամատուն և Ջամառան, և զսուրբ Ստեփաննոսի գրչուի սալեց, և ձիթաղաց մի կորտէ շինեաց յարևելեց կուսէ Հանդէպ կարմիր եկեղեցւոյն, զի փոքր ժամանակ բանաւ՝ վասն այնորիկ զի ձրմաց էր տեղն: Եւ յետոյ դարձոց ի յարևմտեան կողմն մերձ առ սուրբ Յարութիւն, և շինեաց ի Հիմանց բազում աշխատանօք. և աղբի աղբի վշտօք, և այլ բազում Առաստաղ նորագեաց մեծ և փոքր զամէն: Եւ յետոյ գնաց Յերուսաղէմ երկտասան արամբք վարդապետօք և կրօնաւորօք. զի միայն եղբայրն էր ի Հետն, ազգական պարոն խէդէն, և այլ բազում աղքատ կու կերակրէր ի ճանապարհին, և բաղմաց օգնական լինէր ի չողորմութիւն տալն. զի ողորմած բնութիւն ունէր և էր աղքատասէր յոյժ. Իման Յովհաննու ողորմածին...: Եւ յետոյ դարձաւ յերուսաղէմայ և բերեալ ընծայ սուրբ Խաչին գարբաֆ շուրջառ մի Հանդերձիւ քիմխայ վարագուր մի սուրբ Ստեփաննոսի, վեց ժամու գդակ պատկերով արծաթի առաքելոցն, երեք ժամու շապիկ ֆռանգի, Թագ մի Թագաւորական, չորս արծաթէ ոսկի սկիւհ երկու ցնձղայ... և այլ բազում չիշատակ արար սա ի ծածուկ և յերևելի, չիշատակ իւր և ծնողաց իւրոց, Հօրն պարոն Սէֆէտնին, և մօրն Ղրիմ Խաթունին, և եղբարց պարոն Խէտէնին, Սմբատին, Չաքարեայ Նպլուկուպոսին, և պարոն Իսբանտարին, և քուեր Մարգարիտ Խաթունին, որ արծաթէ սկիւհ մի ետ ի դուռն սուրբ Խաչին... Աստուած ողորմի ասացէք Տէր Բարսեղ լուսարարին, որ բազում կու աշխատէ ի Հետ սուրբ Խաչին, և խնամակալ սպասաւորին... Աստուած ողորմի ասացէք անարժան Յովսէփին և իմ ծնողացն, որ զսակաւ չիշատակաբանս գրեցի. թուին. ՌԾԱ. 1602...:

Տես ի Յիշատակարանս Հ. Աւանդ Վարդապետի Փերդալամեան Տոսպեցւոյ:

Վերջիցեալ Քրիստոսի Կաթողիկոսին (Իմաստասէր) մտի-
ղիք էս հումանս. թերեւ իւր ուսումնասիրութեան հա-
մար. որոյ դասակարգութեան և պաշտօնավարութեան
օրեր, շատ շուրճադեմ էր Աղթամարի թէմերն: Մա-
նաւանդ Հիլան, Գաւառաւն, ում անպարտքն է մեր թէ-
միան, թէ իրադիշ և թէ իմուշ տեսած հարեւրաւոր
գրեանք, որք նորա օրով գրուած էին և շատ ընտիր
գրերով, պատկերով և ծաղկազարդ վայելչագրութիւն-
ներով: Ունի շատմ երգեր և տաղեր, և երկն կհամարուի
Պղնձէ քաղաք անուն գրքովին:

Պարտ է ինձ ասել որ, Գողթան երկրի զրկեց վա-
նայ ժողովուրդն շատ աշըղներ ունի, սրոց մէկ մասն
վեր գրեցինք, որք մեղմէ դարերով առաջ էին, իսկ մեր
դարուն, մանաւանդ թէ մեր օրերում եղածներու ա-
նունն ևս կարճանագրեմ որ թէ չմոռցուին, և թէ օր
լինի անոնց վարքն ալ գրելուս համար զիւրութիւն
ունենամ: Յորոց, ոմանք մեռած. և ոմանք ցարդ կեն-
դանի են:

Պառաւ Մարգարայ (որ չետոյ վարդապետ եղած
է:): Տէր Գարութիւն Խալֆայեան (ժամանակագիր): Տէր
Սարգիսեանց Մէլօն: Խոստիկ օղի: Սանթուռ Չալան:
Առգանն, Աշըղ Ուռէփ: Տիլան: Քամանձի Գօրեկ: Մ.
Նիկողոս: Վարդապայ Ա. փօն: Աշըղ Պատուր: Աղբատ Կա-
ղար: Տէր Աբրահամեան Սէթ (Կոյր): Շանօ, (կոյր):
աշըղ Մանուկ և այլն:

Արքայապետ Վարդապետ Տէլփանց:
Արքայ զմուշ մ. պայտանայ մ. արքայ
մ. արքայ մ. արքայ մ. արքայ մ. արքայ մ. արքայ մ.
բնոցար զմ. արքայ մ. արքայ մ. արքայ մ. արքայ մ.
պայտանայ մ. արքայ մ. արքայ մ. արքայ մ. արքայ մ.
մեղորս նա տասն... մ. արքայ մ. արքայ մ. արքայ մ.
արքայ մ. արքայ մ. արքայ մ. արքայ մ. արքայ մ.
... մ. արքայ մ. արքայ մ. արքայ մ. արքայ մ.
մ. արքայ մ. արքայ մ. արքայ մ. արքայ մ.

ՄԵՂԵԴԻՔ ԵՒ ՏԱՂՔ

Մ Ե Ղ Ե Գ Ի

Սէր յառաւօտէ, սէր յառաւօտէ,
ձեմեալ իւր անձուկ ծագմամբ.
Ծագման արևելք անուն այն արուսեկին,
Միթէ այն ի վայր, միթէ այն ի վայր, տաւիղ տարածեալ:
Կամ սիրոյ շրջան, կամ սիրոյ շրջան առեալ,
Աստեղք բոլորեալ:

(Մշտն)

Տ Ա Ղ

Նոր ծաղիկ բղխեաց այսօր յարմատոյն յեսեայ.
Եւ որդի Դաւթի Ծընանի որդի Աստուծոյ:
Բոպէիցն Տէր՝ Օծանի արքայ նոր Իսրայէլի:
Սրօբէիցն անտես բնութիւնն՝ տեսանի մարմնով:
Ի լոյս անմատոյց բնակեալն՝ խանձարօրք պատի:
Սա անմայր ծընեալ, անհայր ծընանի:
Ի բարձունս անբաւ վերնոցն՝ յայրին պարագրի:
Երևեալ տըղայ ծերունին՝ մանուկ Հինաւորցն:
Անեղն եղանի այսօր մարդ ճշմարտապէս:
Յիւր պատկերըն դայ կամաւ՝ կերպարանն Հօր.
Սիրով խոնարհի առ մեզ, բարձրեալ Քաղաւորն:

Սկայք զնախատօն Յնընդեան վերապատուեսցուք:
 Բամեալ մաքրութեամբ Հաղորդ լիցուք ծնեցելոյն:
 Գոհութիւն տացուք նրմին ընդ Հօր և Հոգւոյն,
 Սուրբ երրորդութեանըն փառք և յաւիտեանս ամէն:

Ներսէս Կլայեցի:

ՄԵՂԵԴԻ ՄՈՒՍԱՂԱՍԻ

Կոյս անապական և անախտ ծընողութիւն,
 Ծընար զկենաց պրտուղն մեզ ի փրկութիւն.
 Մոգքն առ քեզ գալով ընծայս բերելոյ:
 Ոսկի՝ արքայի, կընդրուկ՝ Աստուծոյ, զմուռս՝ մեռելոյ:
 Հըրճուիմք այսօր մեք Հոգեպէս.
 Տօնիւ մաքուր սուրբ կուսական:
 Զի ծնաւ Փրկիչ մեր Տէր Քրիստոս.
 Որդի Դաւթի, Աբրահամու:
 Աւետիս քեզ՝ Հայր մեր Ադամ,
 Աւետիս քեզ՝ մայր մեր Եւայ.
 Աւետիս դուտար Եւայի՝ կոյս Մարիամ:
 Եղեմ Դրախտին դուռըն բացաւ,
 Ծառըն կենաց նոր տընկեցաւ.
 Պըտուղ ծառոյն որ մեզ տուաւ,
 Քրիստոս մանուկ, տըղայ ծնաւ:
 Աւետիս քեզ՝ արքայ Դաւիթ,
 Աւետիս քեզ՝ Հայր սուրբ Յովսէփ.
 Աւետիս մաքուր կուսին մայր սուրբ Աննայ:
 Խնդան Հոգւով սուրբ նահապետքն,
 Եւ զուարճանան սուրբ Մարգարէքն.

Զոր ասացին կատարեցաւ,
 Աստուած յերկրի երևեցաւ:
 Աւետիս ձեզ մեծ Նահապետք,
 Աւետիս ձեզ սուրբ Մարգարէք,
 Աւետիս քեզ երջանիկ մայրդ Սառայ:
 Աստղն ի յերկնից փայլակնելով,
 Մոգան ընդ Հովիւս երգակցելով.
 Զոր տեսին վրկայեցին,
 Աստուածըն բան էառ մարմին:
 Աւետիս ձեզ այր և մըսուր,
 Աւետիս ձեզ մոգք և Հովիւք.
 Աւետիս կուսիդ՝ որ ծընար Քրիստոս տըղայ:
 Տէր մեր յերկնից խոնարհեցաւ,
 Յայրն աղքատաց իջեալ ծընաւ.
 Անբան անձինքս իմաստնացաք,
 ԶՀացն իմըսրոյն ճաշակեցաք:
 Աւետիս ձեզ երգիչք երգոյս,
 Աւետիս ձեզ աղքատք Հոգւով.
 Աւետիս ծառայ Կուսին՝ Տէր Կոստանդին:
 Այսօր բերկրին մարմնով յերկրի,
 Որ Թագաւորք են աշխարհի.
 Եւ քահանայք պարին խընջոյս.
 Մաքուր մանկամբք եկեղեցւոյս:
 Աւետիս ձեզ մեծ Թագաւորք,
 Աւետիս ձեզ սուրբ քահանայք.
 Աւետիս, արքայածին մաքուր սուրբ Կուսիդ:
 Արդ նորածին մանուկ տըղայ,
 Մեղուցելոյս դարձս շընորհեա.
 Ըզկենցադոյս պէտըս լըցո.
 Արքայութեանդ արժանացո:

Աւետիս է յանցաւորաց,
 Աւետիս է մաքսաւորաց.
 Աւետիս մեղաւորաց զղջացելոց:
 Փառք քեզ Քրիստոս որ ծընար,
 և ի մըսուր խանձարրեցար:
 Ընդ հօր քում փառք յաւիտեանս:
 և սուրբ հոգւոյն միշտ անխափան:
 Աւետիս ձեզ երկնաւորաց,
 Աւետիս ձեզ երկրաւորաց.
 Աւետիս ուրախ լերուք Քրիստոս ծընաւ:

Ե Ր Գ

Սիրով սիրելի որդին,
 Իջեալ ի յերկիր ստորին,
 Ի կուսէն զգեցաւ մարմին.
 Ծընաւ ի Բեթղազէմին:
 Ահեղ սքանչելիք լինին,
 Մոգք յարևելից եկին.
 Առաջնորդէր լոյս աստղին,
 և կեալ տեսին ըզծնունդ կուսին:
 Դողալով յայրն մըտին,
 Մանուկ խանձարրօք տեսին.
 Աստուած խաչեալ ի փայտին.
 Արքայ նըստեալ յաթուռին:
 Ահա որ տեսին ելին,
 Նստեալ խորհուրդ առնէին.
 և դարձեալ կրրէին մըտին,
 ձշմարիտ հաւատալին:

Ղալամ և քարտէս առին,
 Զինչ որ տեսին զայն գրեցին.
 Զընծայս Աստուծոյ տուին,
 Աշխարհն իւրանց գնացին:
 Իսկ հովիւքն որք անդ էին,
 Զինչ որ տեսին զայն գրեցին.
 Ծընծղայս և փողս հընչեցին,
 Աստուծոյ փառս տալին.
 Հաշտութիւն քարոզէին:
 Նստեալ հայրն Յովսէփ յայրին,
 Զարհուրեալ հրաշիւք կուսին.
 Զսողովմ ըբերեալ նըմին,
 Զմայրն ևւայ ետես յայրին:
 Եկայք տեսէք հրաշագան,
 Ստեղծողն Ադամայ նըման.
 Եկեալ Ադամայ փոխան,
 Մաքառի ընդ սատանայն:
 Ահա աւուրք ութ անցան,
 Թըլփատել եկ Զաքարիայն.
 Զանունն Յիսուս իդին,
 Փրկիչ եղև Ադամայն:
 Յորժամ քառասունքն եղան,
 Կուսին առեալ ըզտղայն.
 Տաճարին եկին յանդիման,
 Որ և դրունք ինքնին բացան:
 Սիմէօն կապեալ ծերն այն,
 Ի գիրկն առեալ ըզտղայն.
 Տէրն արձակեաց ըզժառայն,
 Ստեղծողն օրհնեալ յաւիտեան:

Բանին Հաւատաց ծերն այն,
 Աստուած դաւանեաց ըզտղայն.
 Քաղաքըն դըղըրդեցան,
 Զահիւք ընդ առաջ ելան:

Առեալ Յովսեփայ ըզտղայն,
 Կուսին ծառայ էր Աննայն.
 Եւ փութով ի յետ դարձան,
 յնգիպտոս փախըստական:
 Նշան Հրաշից անդ եղան,
 Զեռագործքն յառած նըման,
 Յորժամ որ տեսին նոր արքայն.
 Անկեալ և խորտակեցան:

Տէր Սարգսյայ.

Մ Ե Ղ Ե Գ Ի

Նոր եղեմ բանաւոր տընկոյն,
 Նոր Ադամն իքէն Հընոյն նորոգօղ:
 Երկակի զիմառիցն առիթ անքակ միութիւն.
 Եին ընդ եղումն:
 Բենական արփի առլըցեալ,
 Ըզմինն մարմնապէս ծընար վերստին:
 Սիրամարգ ոսկի տիպ նըկար յոգիդ.
 Ողջախոհ մաքուր աղանի:
 Երևեալ ծաղիկ գարնայնոյ, վարդ,
 Մանուշակ, քրքրում, շուշան վայելուչ,
 Սարգիոն, յակինթ, զահանակ, յասպիս,
 Կարկէհան, զմրուղթ, շափիւղայ:

(Նէքսէս)

ՏԱՂ ԱՆՈՒՇ ԵՒ ԼԱՌ

Մայր կենդանեացըն Հոգւոց,
 Զոր նախամայրըն ծանոյց:
 Երկոտասան վըտակաւ,
 Վէմն առ ի քէն շնորհեցաւ:
 Ծընար քառիցըն խընկոց,
 Հոգւոյն Հոգիդ խառնելոց:
 Իմաստութիւն զօրութիւն,
 Արդարամէտ մաքրութիւն:
 Նարդօս և զմուռ ծովային,
 Եւ կինամոն կընդրկին:
 Թագ պաճուճեալ զարմանազան,
 Զըմրուղթ և կայծ կարկէհան:

Ո՛վ դու քաղաք կենդանի,
 Տաճար շինեալ Քրիստոսի:
 Բաբունունոյն Յիսուսի,
 Ծընօղ մարմնով ի յերկրի:

Որով Հայցեմք մայր լուսոյ,
 Զերգիչ երգոյս և խնդրոյս:
 Սրբել զմեզ ի մեղաց,
 Լեր բարեխօս անմոռաց:

Եւ ի գըլարթնոց կայանին,
 Երգել զփառս ընդ նոսին:
 Երրորդութեան անեղին,
 Յաւէտ ի նոյն միշտ էին:

(Մէծիւն թարսի)

ՄԵՂԵԳԻ ԻԻԳՈՒՏ

Գոհար վարդ ինքնագոյն,
 Սիրամարգ ոսկեգոյն յարփւոյն,
 Գոհար վարդ ինքնագոյն ի հոգւոյն.
 Սիրամարգ ոսկեգոյն յարփւոյն:
 Դու լուսին լի լուսով ի մէջ գիշերին,
 Դու զօհալ լուսափայլ ի յառաւօտին.
 Մայր Մարիամ, տիրուհի սրբբուհի.
 Թագուհի, պանծալի, դու մաքուր աղաւնի:
 Ի յաւուր բաժանման հոգւոյս ի մարմնոյս.
 Զինահար զիմ հոգիս առնեմ քեզ յանձին:
 Դու ծաղիկ անթառամ լուսոյ մայր Մարիամ,
 Դու ծաղիկ անթառամ աճմամբ:
 Վարդենի հոտ անուշ բուրմամբ.
 Դու սափոր ոսկեղէն լի մանանայիւ,
 Դու բուրվառ խնկալի հոտով անուշիւ.
 Մայր Մարիամ աղաչեա, պաղատեա,
 Աղերսեա, խնդրեա. զի ես եմ քո ծառայ:
 Ի յաւուրս բաժանման և այլն,
 Սերովբէ հողեղէն, Քերովբէ մարմնեղէն.
 Սերովբէ հողեղէն հրեղէն.
 Կուսութեամբ դու ծընար գոր Էնն,
 Դու Տաճար լուսակիր կոչեցար որդւոյն,
 Դու շնորհօք ես լրցեալ եօթնարփեան հոգւոյն.
 Կոյս Մարիամ կուսութեամբ յրդացար,
 Կուսութեամբ դու ծընար, կուսութեամբ
 Ի յերկինքս համբարձար.
 Քեզ ողջոյն և որդւոյ քում երկրպագութիւն,
 Հաւատամ զՆա Աստուած և Մարդ յաւիտեանս:
 Ի յաւուր բաժանման և այլն:

Յ Ա Ղ

Քրիստոս բանրդ Հօր ծնունդ անժամանակ,
 Որ նախ իկուսէն ծնար ժամանակաւ.
 Զանէծս՝ Եւայի ի բաց լուծեր:
 Կացեալ ի բնութիւնս մեր երեսնամեայ,
 Եւ մարդ ճըշմարիտ ի յերկրի շրջեալ.
 Եւ ի Յորդանան գալով ի մաքրութիւն:
 Որ ջուրք են ստեղծուածովքս արարած,
 Որպէս զկարօտ խնդրես վերասրբել.
 Զի ծոց կազմեսցես աւազանին:
 Եւ գառնրդ բարձօղ մեղաց աշխարհիս,
 Ծընունդ սուրբ կուսին սրբիլ յամլորդւոյն,
 Որ քեզ յարգանդէ երկրպագեաց:
 Տեսեալ Յովհաննէս զԱրարիչդ և հրատարէր,
 Ինձ պարտ է ի քէն մըկրտիլ դ՞ու գաս առիս.
 Տէր զիմարդ հոգս ըզհուրդ մաքրեսցէ:
 Հրաման սոսկալի Փըրկչիդ Յիսուսի,
 Լուեալ հրնազանդէր ծառայն Արարչիդ.
 Լընուլ զամենայն արդարութիւն:
 Իջեալ հեղ ի ջուրն առ ի մըկրտիլ,
 Զվիշապն ահագին զբունեալն Յորդանան.
 Զաղիսեալ փշրէր զգլուխ նորին:
 Եւ զձեռն արձակէր ի գլուխ ահեղիդ,
 Մաքրէր ըզմաքրօղդ յանցանաց մարդկան.
 Դողայր սարսափմամբ և սքանչանայր:
 Յերկնից վկայեալ հայր դա՛ս իմ որդին,
 Ի քեզ սուրբ Հոգին հանգուցեալ իբր զաղաւնի.
 Աստուած ի բնութիւնս մեր քև հաշտի:

Ծընունդք ընդհանուր սուրբ աւագանին,
Տօնեն հրրճուանօք ըզտօն Մըկրտութեան.

Լուացումըն մեր մեղաց քարոզեալ:

Ո՛վ գարմանալի խորհուրդս այս մեծ յայտնեալ.

Արարիչն Աստուած ի Յորդանան իջեալ:

Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ,

Չառնոյր Կարապետն ըզմըկրտելն ի յանձն:

Յորդանան լուեալ փախըստական դառնայր.

Վըտակ առ վըտակ պատգամաւոր լինէր:

Մի գետ գարհուրիւր քո Արարիչն եմ ես.

Իջեալ մըկրտիմ լուանամ ըզմեղս:

Յիսուս յառաջեաց Աստուածութեամբ ի ջուրն.

Հանդերձ Յովհաննու ինքն ի գետն եմուտ:

Երկինք պատառեալ ձայն ի յերկնից իջեալ.

Ձայն Հօր ի բարձանց որդւոյ իւր վկայեալ:

Դա է իմ Որդի՛ ընդ որ հաճեցայ ասէր,

Դըմայ լուարուք որդիք մարդկան ձայնէր:

Սուրբ Հոգին իջեալ աղաւնակերպ տեսեամբ,

Յայտնեալ ցուցանէր փառակից Հօր զորդի:

Արդ օրհնեալ է հայր և համագոյ որդին.

Հոգւոյն ճշմարտի փառք յաւիտեանս ամէն:

Սբի՛ Կոռնանր.

Տ Ա Ղ

Ձինչ ազենատիպ վայելչատիպ կային.

Սէր ի սիրայէն քաղցրաձայնեալ օղոյն:

Էր նաւակատիս Հերովդեայ Ծըննդեանն,

Շտապ հրաւէր տըւեալ ամենազան ռամկին:

Մեղմիկ շարժելով յայս կոյս և յայն նայէր,
Մովածըփելին՝ իւր մահաբեր աչօքն:

Կաքել կաքաւէր թըմբկահարիկ աղջիկն,

Պակշոտ պակուցեալ Հերովդիաս արքայն:

Արդ խընդրեանց լինէն հրապարակաւ ասեմ,

Ձփառաց իմոց կենաց ըզկէսըն տաց ես քեզ:

Խրատեալ ի մօրէն յառաջագոյն աղջիկն.

Ե՛րթ խընդրեա ըզգլուխըն Յովհանու պարզեւս:

Մըտեալ փութապէս առ թագաւորն՝ աղջիկն.

Պարզեւս խնդրէր տալ զանարատ ըզգլուխն:

Լուեալ տըտմէր Հերովդիաս արքայն.

Խոժոռ հրամայեաց զանապական ըզգանձն:

Ձայն Մարգարէին մեծին ի ճընունդս կանանց,

Ձայն Կարապետին յառաջըն ճոխին:

Սա էջ ի դըժոխս ճրագաջահ պայծառ.

Լոյս ծագեալ որ անդ նընջեցելոց մերոց:

Արդ օրհնեալ է հայրն և համագոյ որդին.

Հոգին ճշմարտ յաւիտեանս ամէն:

Յովհաննէն.

ՄԵՂԵԴԻ ԱՆՈՒՇ

Քրիստոս եկեալ քահանայապետ սուրբ,

Ի քեզ մտանէ Տաճար լուսակիր.

Լեառըն Տեառն և տուն Աստուծոյ:

Բազմազաւակ կոյս ճընեալ անախտաբար,

Ձազզս որդւոց մարդկան սուրբ աւագանաւն.

Յորդէզըութիւն Հօրն երկնաւորի:

Սեղան սըրբութեան ի քեզ կանգնեցաւ սուրբ եկեղեցի.

Յոր միշտ պատարագեալ բաշխի ի մեզ
Մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ:

Միաբան խընդրեսցուք ի տըւողէն բարեաց.
Զի խաղաղական կենդանութիւն շնորհեսցէ անձանց
մերոց,
եւ նրմա փառքք պատիւ և գոհութիւն.
Այժմ և հանապաղ յաւիտեանս ամէն:

Տ Ա Ղ

Անեղ որդին Հօր միածին բազկատարած.

Այսօր եկաց ի յատենին մեղաւորաց:
Բարձեալ մարմնով ի խաչն անճառ խոնարհու-
թեամբ,

Բերեալ բազկաւ ըզհեռացեալ ազգըս մարդկան:

Գառն անարատ ածեալ իսպանդ պատարագի.

Գայ Հաշտութեամբ Հօր ի բառնալ զմեզս աշխարհի:

Դատաւորքն եղեն դըպիրքն առ Պիղատոս.

Դատաստանաւ բառնալ ի խաչ բողոքէին:

Նկն եհաս վախճան մահու նախաստեղծին.

Եւ ցուրտ և պարզ օր մի յայտնի գառն Աստուծոյ

Զէլի էլին Տէր գթութեանց տայր ի խաչին.

ԶՀաշտութիւն Հօր խաչահանուացն աղօթելով:

Էն էից անպարագիրն յաւիտենից.

Երևեցաւ մեզ ի վախճան ժամանակի:

Ընդ մեզ Աստուծ յայտնեալ բարձրեալ.

Մարմնով զխաչ,

Ընդ գէմ լուսոյ արեգականըն կընքելով:

Թողեալ լըքաւ լոյսն ի ծոցոյ արեգականն.

Թագոյց գճառագայթս իւր ի մէջօրէի:

Ժամն ո՛չ տիւ էր ոչ գիշեր ըստ Մարգարէին.

Ժամանեալ գայ Տէր զօրութեանց ի պատերազմ:

Իշխանութեամբ զհոգին առ հայր աւանդելով,

Ինքն ի հանդէս մարտի ընդդէմ մահու իջեալ:

Լուան իշխանք չարին պակեան ահիւ մեծաւ.

Լուեալ մահու և դըժոխոց սասանեցաւ:

Խոր խաւարին սաստէր Յիսուս լուսով խաչին,

Խնդիր առնէր իւր ծառայիցն անդ գերելոց:

Ծանեաւ Ադամ ըզնշան գալոյն Տեառն ի դըժոխս.

Ծանր ամօթով կայր հիգացեալ երկիւղագին:

Կարկառ նրմայ Յիսուս ըզձեռն իւր բեւեռեալ,

Կոչէր, ձեռամբ քաջալերէր մի երկնչեր:

Հայեաց ի ձեռս, յոտս և իկողս որ վասն քո,

Հայեաց ի գլուխս ձաղկեալ զանէծս ի փշոց երկրի:

Ձաղկ եղեգան հարին գըլխոյս իմ մեղաւորք:

Ձաղկեալ ապտակք և թուք ի ծընօտս ինձ մատուցին:

Ղեղի ետուն ինձ կերակուր ընդ քացախոյ,

Ղեղոյ մեղաց քոց փոխանակ որ ի դրախտին:

ձանապարհիդ մահու ընդ քեզ հետեւեցի,

ձանապարհիս կենաց ընդիս եկ յարութեամբ:

Մաքուր հոգիք սըրբոց և ձեզ մեծ աւետիս,

Մատիք տեսէք մարմնով եկեալ ում ցանկայիք:

Յառաջագոյն գուշակելով զիմ ըզգալուստ:

Յայս ահագին խոր խաւարիս ուր էք կապեալ:

Նովին մարմնովս որ ի կուսէն եմ ըզգեցեալ,

Նախ ի դժոխսըդ իջի փըրկել ըզկորուսեալսդ:

Շնորհք պարգևի հոգւոյն սըրբոյ զոր կորուսաք:

Շնորհեալ փրչմամբըն Քրիստոսի դարձեալ առաք:

Ուստի առիթ մեզ կորստեան ներգործեցաւ.

Ունիմք ըզսա մեզ դեղ կենաց և փրկութեան:

Չընաշխարհիկ մարմինն ըստ իմն ի լերկրի.
 Չար իշխանին մահու յաղթեաց մեր գերողին:
 Պապանծեցոյց Տէր՝ ըզգոռողըն մահարար,
 Պարգևս առեալ ի գերողէն մեզ պարգևեաց:
 Ջաղխեաց ըզգլուխ չար վիշապին զինու խաչին.
 Ջուր լուացման մեզ շընորհեաց զաւագանին:
 Ռահ լուսոյ լերկինս եղև մոլորելոցս.
 Ռամկաց ազգաց որդւոց մարդկան հեթանոսաց:
 Սեռն սիրով փեսայն կապեաց զձեզ լինքեան.
 Սաղարթազուարճ զարդիւք պճնեաց գործովքն
 իւրովք:
 Վասն մերոյ ազատութեան եղև մարմին.
 Վըտակ արեան մեզ հոսեցոյց ի սուրբ կողէն:
 Տըրտմեցելոց անձանց շնորհեաց ուրախութիւն.
 Տարաբնակացս եղև տեղի ապաւինի:
 Բախճանաբար դասեաց զձեզ ընդ Սերովբէսն.
 Բամապետից հոգեղենաց երգակցելով:
 Յօդեաց ըզցօղ բըժըշկութեան մեզ ի վերուստ,
 Յօդեալ արեամբն ի սուրբ կողէն կենդանացոյց:
 Իւրով վերօքն ապաքինեաց զմեզ ի ցաւոց.
 Ի իւթիւ շնչոյ սուրբ բերանոյն անմահացոյց:
 Փութացարուք ըզհետ նորա պայծառ վարուք.
 Փայլեալ փառօք ի գալստեանն վերջին:
 Քրիստոսի խաչեցելոյն վասն մարդկան.
 Քաղցր ձայնիւ տուք օրհնութիւն միշտ յաւիտեան:

ՄԵՂԵԴԻ

Նոր ձայն Աւետեաց հրեշտակապետն այսօր,
 Փողէր խընկաբեր կանանցն ի վերայ վիմին,

Խաչեալն յարեաւ ձեզ Աւետիս:
 Երթեալ խընդութեամբ աշակերտեալ կանանցն,
 Պատմէին դասուցն ընտրեալ մետասանիցն.
 Յընծացէք յարեաւ Տէրն ի մեռելոց:
 Բաբունուոյն էից աշակերտեալ խըմբից,
 Պետրոս Յոհաննու հանդերձ ընթացեալ,
 Տեսին ըզգերեզմանն ունայն ի մարմնուոյն:
 Սէրն տարփողին օտարանայր յաչաց.
 Չայնէր ողբալով պարտիզպան,
 Յոյց ինձ թէ բարձեր զի ես առից ըզնա:
 Երևեալ անդրէն քաղցրիկ փողէր բարբառ,
 Յընծայ Մարիամ յարեայ, մի լար զիս մեռեալ:
 Բաբունին ձայնէր առնոսա:
 Սըրտիւ անձկալեաւ բաղձալին դիմեալ,
 Մի լիս մերձենար ասէ չեմ ելեալ առ հայր.
 Չպըտուղս առաջին տալ նըւէր նըմին:

Նէրուէ»

ՅՈՐԴՈՐԱԿ ՆՈՐԻՆ

Կանայքն արտասուօք լային զբարձօղն արտասուաց.
 զմեռելոց կենդանատուն որպէս ըզմեռեալ:
 Անմահ իւղ թափեալ անուան, զիւղս անուշս բերին,
 կընդրուկ և զըմուռս, հալուէս կենդանատու Փրկչին:
 Թաղեալըն մարմնով լերկրի զմահ մեռուցանէ.
 զաղամեան մեռեալ բնութիւնն կենազործէ:
 Ուստի և զուարթունք իջեալ լուսափայլ ծագմամբ.
 խնդութեամբ տային մարդկան զԱւետիս կենացն:
 Ղամբար լուսափայլ վառեալ ի վերայ վիմին.

մեռօրէն պակեան յահէն դասք պահապանացն:
 Ի բաց մերկացեալ զերկիւղն խընկաբեր կանանցն.
 աւետեաց քարոզք եղեն սուրբ աշակերտացն:
 Կարօտ անձկալի սիրով Պետրոս յարուցեալ.
 սիրեցեալըն Յովհաննէս արագ ընթացեալ:
 Ունայն ի մարմնոյն տեսին ըսուրբ գերեզմանն,
 հիացեալ անդրէն դարձան առ Համադասիցն:
 Սըրտիւ անկձալեաւ վառեալ ի հուր սիրելւոյն.
 ըղձալին աչօք տեսեալ և ո՛չ ծանուցեալ:

Նէրէս Կաթողիկոս

ՄԵՂԵԿԻ ԱՆՈՒՇ

Կենդանի վկայք իմաստունք և սուրբք,
 Մարք մեր հոգևորք ծնողք յորդիս լուսոյ:
 Կոյսք իմամտութեամբ զլապտերս հոգւոց լուցեալ,
 Կանացի բնութեամբ մահու եղեն յաղթողք:
 Հուր սիրոյ ինքեան սուրբ փեսային վառեալ,
 Ձկուր մեղաց բոցոյն զայն շիջուցին արեամբ:
 Ձիւնափայլ հոգւոց ըզպատմուճանս լուցեալ,
 Գոյն արեան մարմնոյ պսակ փառաց ներկեալ:
 Ղամբարամբ լուսոյ ի յառազաստ մտին,
 Մաքուր հարսնեօքն ուրախանան յաւերժ:

ՓՈՒԿԷ ՅՈՒԴՈՒՄԱԿ

Ի կենարար փայտէն ծաղկեալ խաչին,
 Պտուղ բազմազանեալ,
 Գունդք ամենայն սուրբ կուսանաց.
 Մնողք ընդ որդւոց և դստերաց:

0101
 4/3/3

Աղաւնացեալք Երամովին,
 Եւ ճագախառն ելեալք լերկինս,
 Խառնեալք ի դասս երկնաւորաց.
 Այսօր բոլոր դասք կուսանաց:
 Վասըն բանին վկայք զինեալ,
 Եւ մարտիրոսք՝ որք խաչակցեալք,
 Կոյսք իմաստունք որ վեհ արուաց,
 Ի կանացի բնութիւն իգաց:
 Պարկեշտ վարուք հոյլքըն կուսից,
 Քո հարսնացեալ ճառագայթից,
 Որոց հայցմաբըն համայնից,
 Զմեզ յամենայն մաքրեա յաղտից:

ՏԱՂ ԱՆՈՒՇ

Այսօր սուրբ հոգին Աստուած իջեալ յաշխարհս,
 Աշխարհս հնչեաց ձայն որոտման մեծի:
 Մեծի աւետեաց հնչեաց բարբառ լերկնից,
 Յրկնի և երկրի նոր նորոգումն ազգէր:
 Ազգէր յառաքեալսն լոյս ի հրեղէն լեզուս:
 Աեզուս բաժանեալ կենդանի արբին,
 Արբին ըզբաժակն յամահական այգւոյն,
 Յայգւոյն էական որ ի խաչին ճըմլեալ:
 Ճըմլեալ յառաքեալսն ուրախութեան զմայլումն:
 Զմայլումն երկնային մատուռակէր հոգին:



ՏԱՂ Ի ՆԵՐՍԻՍԻ

Ի խաչին տնկեալ որթոյն,

Ողիւյզ վաղահաս խայծեալ.

Քարամբք ճըմլեալ գինի,

Ուրախարար սիրով:

Սէր սիրոյ սերման ճընունդ,

Սիրաբողբոջ սիրոյ ծաղիկ.

Պրտուղ քաղցրահամ ճաշակ,

Հրեշտակատեսիլ:

Տեսանօղբն էին լուսոյն,

Տեսին Հօր ի բարձանց.

Այլև ծոցածին բանին,

Անեղին եղեալ երբեմն:

Երբեմն անեղին եղեալ,

Սկիզբն եղականին բնութեան.

Ձոր և տեսեալ վկայն,

Յերկինըս բազմեալ փառօք:

Փառաց թագաւորն երկնից,

Յալտնեալ զինւորին յերկրի.

Ի յասպարիսիդ վասն իմ,

Դու մի երկնչիւր ասէր:

Ասէր աղաղակելով,

Առ տիրասպանից Հանդէսն.

Ահա տեսնեմ զՅիսուս,

Իւր Հօր ընդ աջմէ նստեալ:

Նըստեալ յաթուռս Քրովբէից,

Վերին Հրեղենաց դասուցն.

Տեսէք զՀոգեղէն բնութիւն,

Վասն իմ չարչարեալ մարմնով:

Նրման խաչելոյն Հայցէր,

Զթողութիւն ըսպանողացն:

Որև կոչեցաւ սօղոս,

Նորին Հետեեալ ոտից:

Ոտիւք սլացեալ յերկինս,

Եւ ի ձեռքս քօ ասէր.

Յիսուս, աւանդեմ զոգիս,

Մինչև ի գալուստ քօ սուրբ:

Սուրբ Ստեփաննոս պըսակ,

Եւ նախամարտիկ վըկայ.

Վասըն տօնողացըս քօ,

Դու լեր բարեխօս առ Տէր:

ՅՈՐԴՈՐԱԿ

Ի գաւազանէն յեսեալ,

Ստեղնեալ Ստեփաննոս.

Առաջին պտուղ ծառոյն,

Որ ի գողգոթայ:

Նարդոս և քրքբում,

Զըմուռ, ծաղիկ ծովային.

Մանուշակ, շուշան վարդից,

Կարմրերփեան պըսակ:

Երփնազարդ պըճնեալ,

Դեղով նրման Հրեշտակի.

Բուրուառաւ ոսկէիւ խընկոց,

Ըզհոտ անուշ բուրեալ:

Բարուն պանծալի բանիւ,

Վարդապետ բարի.

Իմատիւք Հոգւոյն լցեալ:

Աստուածաբանէր:

Սիրով անձկալեալ յայնչ մտքով մանց
 Չեռեալ ի սէրսիրելոյն: յ մի կէտրոցի
 Ի մէջ ջուրց բազմաց, բոս արժեքի մը
 Պահեալ անշիջանելի: սոյն յամբով միցա՛մ

Ի բարձունս երկնից զիմեալ, բայց քայն
 Սրբոիւ մաքրութեամբ, ոչ ոք քան ի մե
 Անտեսին փառաց տեսող, բարձրաւոր
 Հօր իւր ընդաջմէ: ոչ ոք քան ի մե՛ն

Սըլացեալ թեօք հոգւոյն, յայնչ մտքով
 Երկնաճեմ գոլով, յայնչ ի փառանախամ
 Սկզբանտալին տըւեալ յաւանդ, ոչ ոք քան ի
 Զիւրական պատկերն: սոյն յամբաց զմէ՛ն

Նլից աստիճան գործեալ
 Զհարկանօղ քարինս:
 Զհետ ինքեան հանեալ, յայնչ մտքով
 Զբազումս յերկնային խորանս: յամբով

ՓՈՒԹԷ

Կենդանի վրկայ մահուամբ կենդանւոյն յաւէտ:
 Զմաղթանս մեր մատո որպէս ժողով անուշ:
 Արքային երկնից զինուոր արի մարտիրոս,
 Տալ մեզ օգնութիւն հայցեա ընդդէմ թշնամոյն:
 Թագիւ անթառամ Յիսուս զքեզ պսակեաց: զմ
 Հաղորդ քուգ փառաց խնդրեա լինիլ տօնողացս:
 Որ յուրախութիւն անճառ Տեառն քո մտեր:
 Պաղատեա և մեզ ի նոյն մտանել ընդ քեզ:
 Ղեկօք հաւատո անցեր ընդ ծով աշխարհիս.
 Վերածել ըզմեզ հայցեալ ի մեղաց ծովէն:
 Ի քեզ համբառնամք ըզմիտս Քրիստոս Աստուած.
 Նախավկային հարցմամբ և մեզ ողորմեա:

Կերպարան Հօր ըզգեցար ըզգերպ Աղամայ,
 Վասն քո մերկացելոյն շնորհօք զմեզ զկեցոյ:

Որ բուրուսաւ ծերոցն յերկինս դասեցեր
 ըզմանկունս:

Զաղօթս մեր նովաւ ընկալ ի հոտ անուշից:
 Սրբութիւն սրբոց սրբեաց զմիտս և

զխորհուրդս,
 Տեսանել զքեզ հոգւով ընդ Ստեփաննոսի:

Երևեալ ընդ աջմէ Հօր տեսանողին հայցմամբ.
 Զերգաբանս և ըզտօնօղքս ընդ նմին դասեա:

Ներսէս Կաթողիկոս

ՏԱՂ ԱՆՈՒՏ

Այսօր անդրանիկն Հօր միածին, ուրախանալ
 Յերկինքս սըլանայ աղամային կերպիւ:
 Նըւագ ներբողից եղանակեն նըմա, զոյնք բնարացիք
 Հոյլք հոգեղինաց երկնաւորաց խըմբից:
 Իրժըխոցն պանծալի երկնապաճօյճ գեղով, յամբով
 Պըճնեալ մըտանէ ի հարսնարան լուսոյն:
 Բարունք հոգևորք ձեռնադրեցան այսօր, ուր ուր
 Օծմամբ սրբութեան ի յօծելոյն մեծէ:
 Ի սուգ տըրտմութեան թախծեալ մետասանիցն,
 Դէտակն ունէին իջման հոգւոյն սրբոյ:
 Ահիւ սարսափմամբ Յիսուսի արդիւնազարդ մարմնով:
 Սուկալի ձայնիւ եղանակեն նըմա,
 Դասքըն Սրովբէից սաւառնացեալ թեօք:

ՅՈՐԴՈՐԱԿ
 Վեհից թագաւորն Յիսու առ Հայր մտանէր,
 Արեամբ կարմրագոյն ներկեալ ըզմարմինըն մաքուր:
 Բաբունեացրն պետն Յիսու օծեալ միածինն,
 Դողմամբ Հիացոյց զվերինսն փառօք տեսութեամբ:
 Ահիւ սարսափմամբ լրցեալ ջուկք հոգեղենացն,
 Պարուք ցրծութեամբ երգեն զերգըս սրբբասաց:
 Եւ մեք երգակցեալ նոցին Հնչմամբ օրհնութեան,
 Տացուք գոհութիւն յաւէտ սուրբ երրորդութեան:

Անբրէս Լարրապէս

ՏԱՂ ԱՆՈՒՇ ԵՒ ԼԱԻ

Նոր դրախտի քո Տէր զոր տնկեցեր յերկրի,
 Վարդ անուշահոտ և մանուշակ բլրբում:
 Առեալ ընծայեմք քեզ թագաւոր փառաց,
 Գերազանց զվարս աստուածայնոց արանց,
 Բանաւոր ծառոց զերախայրեաց պըտուղ,
 Անցեալ ընդ երկինս քահանայից նուիրեմք:
 Սոյն խոնակ բուրվառօք զաղօթս սուրբ սոցա,
 Ի հոտ անուշից մատուցանեմք քեզ Տէր,
 Սոցին մաղթանօք և մաքրական վարուք:
 Նորոգեալ զմեզ ի Հնութենէ մեղաց:
 Երանականաց արժանացո զասուց,
 Բամիս ընդ նոսին զմեզ ի լուսոյ խորանսդ:
 Սրբեա զխաւարային ի մէնջ զխորհուրդ մտաց,
 Եւ լուսաւորեա ի ընդրուածօք սոցա:

Սոցին Հետեիլ լուսաշաւիղ գնացից,
 Յանճառելոյդ արփիեանալ լուսով,
 Երգել ընդ նոսին երրորդութեանը զփառս:
 Այժմ և յաւիտեան և անգրաւ յաւէտ:

ՓՈԹԷ ԵՒ ԱՍՍ

Այսօր մայր սիօն Բանայ զառազաստ,
 Յնծայ տօնելով, զարդարի փառօք:
 Գոչէ խնդութեամբ յաւուրս լիշատակի:
 Դասուց ընտրելոց սուրբ Հայրապետացն,
 Երջանիկ խմբից սուրբ վարդապետաց,
 Զորք երկնից լինին այսօր լիշատակի:
 Երկիրս երևի երկնից զերագոյն,
 Ընդ իննեակ դասուն աստ պարագայից:
 Ժառանգաւորն երկնից փոխան իւր կարգեաց,
 Ժառանգ աթոռոց զքահանայապետան:
 Ի հոգւոյն լցեալ սրբոյ գիտութեամբ,
 Լուսաւորեցին սուրբ զեկեղեցի:
 Խորհրդով ծանեան զխորս Ասատուծայ:
 Ծանուցին բանիւ բանաւոր հօտից:
 Վենացրն հացին քաղցելոց բաշխողք:
 Համեղաճաշակ գինւոյ մատրուակք:
 Զայնիւ գօչեցէք առ ի ճաշակե...
 Ղօղեալ յաշխարհէ զմէջ զիտութեանս
 Ճառագայթ լուսոյ յերկիր ծագեցան,
 Միածնին քարոզք ճըշմարիտ բանիւք:
 Յանհաս յաղբերէն ըզմեզ արբուցին:

Նորոգելով հողով դիտութեամբ:
 Շարժմամբ վկայիցն ի յորովայնէ,
 Ուրախ արարին զքաղաքս Աստուծոյ:
 Չարին արմատոյ տապալիչ տապառք,
 Պարուց ոչխարաց հովիւք և տաճօղք:
 Զրով կենդանարար սնուցանօղք գառանց,
 Ռահիւք ի յերկինս առաջնորդեցին,
 Սրբելով զհողիք սուրբ աւազանան:
 Վարդապետք սուրբք բանիւք և արդեամբ,
 Տանս եկեղեցւոյ տնտես իմաստունք:
 Բաբունք կատարեալք տղայոցս ինքեան:
 Իիւթիւ սուրբ հողոյն ըզհին և զնորս:
 Փութացեալ ելէք առ հովին քաջ,
 Քաւիչ մեր լերուք բարեխօսելով:

ՅՈՐԴՈՐԱԿ

Այսօր դշտոյ պանծալի,
 Երկնահրաւէր բարձրացի.
 Յիշատակաւ ձեր տօնի,
 Սուրբ հայրապետք բաղձալի:

Այսօր մանկունք սիօնի,
 Բերկրեալ ցնծան զուարճալի,
 Յիշատակաւ ձեր տօնի,
 Սուրբ հայրապետք բաղձալի:

Այսօր որդիք սիօնի,
 Յընծան հողով խնդալի,
 Յիշատակաւ ձեր տօնի,
 Սուրբ Հայ և այլն:

Այսօր զուարթունք ի յերկրի,
 Տօնեն ընդ մեզ հրճուալի, յիշա. . . և այլն:
 Այսօր և մեք երգակցեալ,
 Ուրախացուք բերկրալի, յիշա. . . և այլն:
 Ընդ հրեշտակացն պարեմք,
 Յյաւուր կատարման, յիշատակաւ. . . և այլն:

ՏԱՂՆ Է ՍԱ

Ի հանդէս տօնի ձեր ըախացեալ տօնեմք.
 Հարք և վարդապետք եկեղեցւոյ մանկունք:
 Արեամբ Քրիստոսի փրկեալ մաքուր ժողովք,
 Պար առեալ հրրճուիմք յաւուր կատարման ձերոյ:
 Որ սիրով սրբտի հարալք ի սէր Փրկչին,
 Փոխան ձեր հեղէք զարիւն արեան նորին.
 Զորդիս հաւատոյ ձեօք ծընեալ մանկունս.
 Նախընծայեցէք անօրինաց սրբով:
 Հարքըդ փութացալք ըզհետ որդոյն յերկինըս.
 Առ այն՝ ում նրէր նախ ըզմանկունս ետուք:
 Հովիւ նըմանեալք քաջ և արի հովուին,
 Զանձինս դընելով ընդ հօտին ի մահ յօժար:
 Յովսէփ և Սահակ, Թաթիկ արի հովիւք.
 Բանաւոր գառանց եկեղեցւոյ տաճօղք:

ՅՈՐԴՈՐԱԿՆ Է

Քահանայք պատուեալք օծմամբ հողոյն շնորհաց,
 Միշտ վասըն հօտիս մատուցանօղք մաղթանս:
 Քաջաջ սարկաւազ և Աբրահամ մաքուրք.

Միշտ զինեալ դառինըն բարձրագոյն քարոզք:
 Ղևոնդ վարդապետ խոհեմ խորոց Փրկչին,
 Մուշեղ և Արսէն և Մամուէլ սուրբ Հարք:
 Բարեխօսեցէք վասն Հօտիս Հովիւք,
 Յաւէտ անվրդով զեկեղեցիս պաշէլ:
 Ի բազմօրեանակ և յողմակիր, . . .
 Ի թակարթակիր բելիարայ չարին:
 Զի որդւոյ ընդ Հօր փառս երգեսցուք յաւերժ,
 Հոգւոյն ճըշմարտի յաւիտեանս ամէն:

. Գնման յամբարայ զմէ Կնոս սքրմա՛մ Կ
 : Գնախնան յարքնքն Գամբարդափ մ Գրա՛ն
 , Գիտո՛ն Գոսգան յամիցցի Գոտայից՝ Գնածիմ
 : Գողմն մանդատափ Գոռայ Գնիտո՛նցը յամտա Գաթ
 , Գնիցցից Գն մ Գրաղա՛ն Գոցցս իողմն Գմ
 . Գնիցմ մամգա մնիցար Գնքն զմն մատիփ
 . Գնտրման յամցճ Գոճն յոտաւա՛ն սիցցո՛ւ
 : Գողցս բոսմիցոմ Գնքնքն Գնա՛ն
 . Գնմիցից միորցո ուճքը Գրաբա՛ն Գրցցա՛ն
 : Գոտամ սնտրմանը Գմ Գնա՛ն Գնա՛ն
 , Գնտրո՛ն Գրա մ Գրա Գրամանցմ Գնիտ
 : Գաճօյ ղան մ Գնա՛ն Գնց իոյմնը սմվնո՛ւ
 . Գնիտ մրա իմիմ Գնա՛ն մ Գնա՛ն
 : Գրօճառ յարքնքն Գնա՛ն Գնա՛ն

Ճ ՏՄՄՄՄՄՄ

Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն
 : Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն
 , Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն
 : Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն Գնա՛ն

ՀԱՅ ԱՅՈՒՂՆԵՐԱՅ ՍԵՐԵՐԳ

ՅԱՂԱԳՍ ՀՈՒՒՈՅ ԵՒ ՍԻՐՈՅ ՈՏԱՆԱՌՈՐ Ե ԲԱՆՍ

Այ՛ս ծովահան գիշերս Ի քուն՝ ես երկու շրջան մանեցի,
 Խօշտարս աչ ՚ի մխտ ընկա՛ն թէ՛ղմ ելա՛յ զճահաս վերուցի
 Փարչկմ աչ անուշ զինի, անի խօշտարիս դռուն գնացի,
 Խօշտարամ զդուռն բաց, ձեռն եկեր ոտվիս կու մըն:

Հանցանք ես Հայրին առի, որ զբաջերն իջարն ուտուցի
 Դարձայ մուճաւաթ բերի չեղինուցն սուն կապեցի,
 Ելայ ի վրան նստայ Աստուծոյ գանգաղիմ մի արի,
 Աստուած, մէկ ի վար Հայէ՛ թէ Բն՝ ողորմ բաներ կու լինի,
 Տասն տարեկան մանուկն, ի սիրուն զէտ մոմ կու Հալի:
 Ոսկորն է պատուք եղեր, ու կաշին զէտ ձէթ կու վառի:

Մտիկ իմ եարին արէք, զնչ Հագեր ամէնն է կանանչ,
 Հագեր գոցնգոցն կապայ, կօճակ շարեր ու օղակն է կանանչ,
 Առեր ու պաղջան մտեր, ջուր կերթայ եղերն է կանանչ,
 Մտիկ ծառերուն արէք, ծառն ծաղկեր տերևն է կանանչ:

Ա՛յ իմ նռնախալսս, որ եկիր ի մեր մահալլաս,
 Եկեր ու նոր սէր բերեր, լուկ ցեր զկրակն ի վաս,
 Երթամ աղաչեմ զԱստուած, երբ եկիր նէ աչ չեթաս,
 Զերեսդ երեսիս զնեմ, որ զեկած ճամբադ մոռանաս:

Ջուր զլլալին կուգաս, գետի թորակնէն կուգաս,
 Երթաս աչդ ձորերդ ի վաչր, ծաչնդ կայ ու դուն չեղես:
 Դիտեմ սիրու Տէր ես դուն, ի օտար աշխարհ կու գնաս,
 Երթաս ու սիրուդ Հասնես, գիշերն ի քուն չի լինաս:

Երնեկ ես անոր կուտամ, որ առեր իւր եարն է փախեր,
 Ոնց որ զբամուրջն անցեր, ջուրն էլեր զկամուրջն է տարեր,
 Զեկի, եղմնիկ եկեր, զոտխուն Հետքն է դորուսեր,
 Առեր ի պաղջան մտեր, ցորեկով զդրնչին է պագեր:

✓ Գիշերս ես է քուն էի, չիմ հալալ տեղացն է վրայ,
 Լուսին ալ կամար կապեր չիմ ճոհար անձկանն է վրայ.
 Ա՛յ իմ բարձր ու բարձր լուսին, շատ բարե տար իմ խօշտարին.
 Զգուռն այլ նշանով ասեմ, բարձր պատ ու ծառն է միջին,
 Նստեր է ծառն շքին, կիսմէ զիւր լուրջ պակկին.
 Կիսմէ ու հայերէն կասէ թէ ի՞նչ անուշ է սէրն ու գինին:

Սուրբ Աստուածածնի տօնին, որ իջաւ տիւպէրն է յեգին,
 Մանտր քայլափոխ արաւ, լուկ գնաց է պատրուսնին.
 Քաշեց զիւր հոռում լուսին, լուկ ելից է շարձմաթին,
 Շարձմաթն ալ է վեր քաշեց, լուկ ցաթեց շառաւղին է յեգին,
 Խաղողն ալ զիւր պէյթն պտաց, թէ չհասաց սրտին մուրատին.
 Օր մի կիւղէլին ծոցին, գանձ հապար ներքե տերեւին:

✓ Հիւանդ եմ է քո սիրուդ, առ խնձոր արեկ զիս ի տես,
 Արեկ նիտտ է բարձին վեր, ու ձեռքդ տար ու զիմ սիրտն տես.
 Զիմ ցառուն տեղն դու գիտես, ինձ օտար հէքիմ չի բերես,
 Թէ նեղէնաց զեղ արան, թէ չէ լից զնոր սէրդ ալ է ներս:

✓ Ա՛յ իմ աննման, մայրն չէ բերեր քեզ նման,
 Աչերդ է է ծով նման, ու ունքերդ է թե ծիծրանկան,
 Այդ քու աչերուդ շալֆուն, մէկ ամպեր Մոլբատ Խորասան,
 Ունքերդ է կամար կապեր, ու կերթայ է Մարրն թալան.
 Շատ ու շատ վաճառ արեր, շատ խօճայ ու շատ պաղրկան,
 Գեղներ եմ խնկիդ նման, ու առեր եմ գոյն զաֆարան.
 Զգիտեմ թէ քո սէրդ արեր. թէ եկեր է օրս մահուան:

Վերե փողոցովդ է վար կուգի, ճուկ ու մուկ հազար գուկախով,
 Խօշտարս ալ է դէմս ելաւ, լուկ բարե երես հիւգումաթով.
 Գրկեցի ու պինդ պագի զիւր աչերն խիտ կարօտով,
 Կերթար ու լալով կասէր թէ ի՞նչ խաղք էր եղանք ցորեկով:

Սրտիկս երկու գուռն ունի, մէկն գաղտ, ու մէկն ալանի,
 Յայն գաղտ գուռն է դուրս ելայ, լուկ գտայ հատիկմ ալ ասի.
 Այն ոսկին որ չիմ ափն ընկաւ, չէր ինկեր է շատ ոսկերչի,
 Ո՛չ ինքն է բուրան մտեր, ո՛չ լսեր ձայնն կրուսնի:

✓ Տեսայ զիմ հոգուցն հոգին, զարդարուեր ու կերթար է ժամ,
 Գարձաւ ու ինձ ճուղպայ երես, թէ մէր կերթաս, քո ժամը է հարամ.
 Գարձեր ինձ պագիկ մի տնուր, ահա ժամ ու շատ մի քարամ:

✓ Յոր տեղ ժամատեղ տեսնամ, քեզ համար ես երթամ է ժամ,
 Աղօթք ու աղաչանք անեմ մինչ որ քո ծոցոյդ տերանամ:

✓ Աղաղկէ քնից վեր ելայ. թէ երթամ չիմ եարն է բարե,
 Խօշտարս ալ է դէմս ելաւ, իւր երեսն էր վարդ ու տերեւ,
 Վարդն ալ խօշ լէպթ ունի, վաղվէնէքն երբ դպչի արեւ,
 Հանէ զիւր կանանչ կապան, լուկ հազնի զկարմիրն է վերե:

Առիւծն չառիւծին մտէն, թէ հաղար որ տան նա չուտէ,
 Գէմ ինքն ալ առիւծ եղեր, զառիւծին փասն կու պահէ.
 Ծառն գնալ չկարէ չայն տեղացն, որ ինքն բարեբէ,
 Երբ կրթն է ծառէն լինայ, նա կացին զինքն կըկտրէ:

Կատեմ թէ հայերէն ասն, թէ չէ ես ասեմ դուն լուկ,
 Զբերանդ ալ քննով ամէ, ու զսկանջդ ալ է դոց դու պահէ.
 Զէտ օղի ականջդդ առ, զէտ կարմիր զեկան ծրարէ,
 Այն մարդ որ շատ կղուրցէ, նա յետին խօսքն կու լուկ:

Արծիւն ու շահէն, բաղան՝ հետ վարժ, հարջառուն դանտէն,
 Տարին պարեխին ամին, ու բոլորն քար շարեցին,
 Վարի վարձինակ մի եկաւ, դորսն առաւ այն երկու քաջին,
 Արծիւն ու շահէն, բաղան, լուկ հայրան է վայր մնացին:

Գիշեր դու չերկան կեցիք, թէ կարես տարեկ մի եղեր,
 Իմ եարն ինձէ հիւր եկեր, դէմ հաղար տարու թէ գիտես,
 Առաւօտ դու իրատ կեցիր, որ զմեր խաղն կուերես,
 Գաս գլոյսն է վրայ բերես, զիս իմ եարէն բաժանեց:

Զայդ պագդ որ է քո բերնէն դու տուր քո սրտի կամով,
 Հանցեղ անուշիկ պտուղ, ոչ ցամաք երկիր կէր և ոչ է ծով.
 Նման էր այն պաղոյն, որ Ադամ կերաւ խաբանօք,
 Կերաւ է դրախտէն ելաւ՝ ես է քո ծոցոյդ կարօտով:

Զիմ եարն է գնալ տեսայ, որ կերթար է ճամբադ է վար,
 Մանտր քայլափոխ կարնէր, կու քաղէր ծաղիկ նուրուֆար.
 Ամէն հանդէսու տեղիկ, երեսին դնէր ու կուլար,
 Կուրնար չարկմնուն աչուին, որ կուպահէն դեկ չիսնէ օտար:

✓ Սրտիկս է խաղիկն եղեր, դօր դքո դուսան կու եկի,
 Անձիկս է չոր փայտ եղեր, ու զիրան է վառ կու պահէ.
 Տեսեր եմ որ միտն եկի, նա զիրանն դարբեցունէ,
 Թողեր միտն զիւր ոսկորն, դեռ է կրանին փայտ կու ձգէ:

Բու սիլ ես որ չեղելիդ ես ելեր. դաչդ օտար Հողդ հու կոխես, Թէ վարդ ես նէ վար եկոյ, Թէ օտար ծաղիկ նա գնան.

Ոչ վարդ եմ է վար գալու. ու նչ օտար ծաղիկ գնալու, եկեր սերուդ եմ առեր, սչ գալու եմ, և սչ գնալու:

Այս գիշեր լերանց բարձանց, ծաղիկունանց է մէջն եմ քուն, Իմ եարն է վերե գլխուս, հու խմէ ես անհող է քուն.

Գլխարկս ալ է վեր կալի, լուկ Թուալ նման կաքաւուս:

Թեկի շահէնի առի, լուկ Հասայ է յեղը ծովուն, Հասայ չհասայ սերուս, վնչ Հազար մօրս բերելոցն,

Մահալէդ է վաչը հուգի, լուկ տեսի չոր գանկ մի ճըգած, Ոտքս ալ Թապալ տուի, լուկ երեսս է վեր ծիծաղած.

Ես ալ գէմ մանուկ էի, է մանկանց մէջն կանգնած. Կղպանքն է վերայ դարկած, ու զբալնիքն աշխարհ վտարած,

Հողին Հոն վարօքն անցաւ ու զմարմինն է Հողն անիծից, Մարմինն է Հողուն է դուրս, մէկ խօսք զՀողին վճարեց.

Ձմեղքն ես ու դուն արաք ու երկուքս ենք պարտականք, Ես Հող էի է Հող դարձայ, քո ամէլն դեղ պարեց:

Ձիմ եարն է մանէթ կուտամ, է վարդին մէջ պահեցէք, Թէ երթամ ու շուտով դառնամ, զամանաթըս է տէր Հասուցէք.

Թէ երթամ խարիպուկ մեռնեմ, վարդն ձեզ դտէրն չիշեցէք: Գարբիէլ իջեալ յերկնից և սրբոյ կուսին աւետեաց.

Ուրախ լեր կոյս տալիթայ, զի դժխոյ լինիցիս փառաց, Ահա չղանայ շնորհօք. զոր յառաջն Եսալի ասաց.

Իբէն ծնանի Քրիստոս, որ փրկէ զմարդիկ է մեղաց: Բանն է Հօրէ առաքեալ, և յարգանդ կուսին բնակեալ,

Առեալ յԱրեմէ կուսին, և անշուշտ ընդ բանին խառնեալ. Մարմնով է կուսէն ծնաւ և կնիք կուսին սչ խախտեցաւ,

Ծնողն է Աստուածածին, խկապէս և ծնեալն Աստուած: Մարիամ լցեալ շնորհօք, և Հողով սրբով բարբառեալ,

Անձն էմ ցնծացաւ է տէր, և Հողիս է Փրկիչն Աստուած. Ձքողցեալս ելից Հացիւ, և զանկեալ բնութիւնս կանգնեաց,

Ձհօրն աթոռոցն ընկեց, որ զնախնին մեր զԱզամ խաբեաց: Սուրբ կոյսն է յաչրին ծնաւ, և եղեն նշանք սքանչելեաց,

Լոյս մեծ է յարիւոյն Հատեալ, Հատեալ առ կոյսն յաչրն ծագեալ.

Բազումք է յերկնից զօրաց, խառնեցան ընդ դասս Հովուաց, Փառք է բարձունս երգէնն, յայանելով զծնեալն Աստուած:

Եղնիկ մի ջրնն խմելն զեղբերուաց զուքն էր տեսեր, Նա յԱնթաքեայ զարկեր, Թէ պէ՛հ եմ Հետ վերուցեր.

Օր մի յառիւծէն փախեր, նա եղջիւրն է ծառն է գամեր, Ձով որ է ճարակ դերեր նա չիւր մահն է յանկից եղեր:

Օրհնեալ է Աստուծոյ անունն, որ զբարեաց դուռնն է բացեր, Ձհաշխարհս զեղեցիկ ստեղծեր, և երեք դիմաց բաժաներ.

Ձրեշտակս է յերկնս դերեր. Ադամայ զգրախտն տուեր, Ձերկերս անասնոց տըվեր, անբանից տեղիք զսա շիներ:

Բազան է յանտառ մորին, Թէպէտ բու, Թէպէտ բազայ է, Գուհարն է ծովին միջին, Թէպէտ քար. Թէպէտ գուհար է.

Խելօք է յանգէտն է մօտ, մտիկ արկք Թէ ի՛նչ նման է, ձրագն է կուրին առջև կու վառի ինքն չգիտէ:

Եկին աւետիս բերին Ադամայ Թէ նիստ ու խնդայ, Եղեմ զբախտէն ելար, պատճառ սիլ եղև մէկ ասն.

Թէ զօճն ու զեւայ կատեն, նա պատճառ եղաւ սատանայ, Ես քեզ սատանայ եղայ, ինձի սիլ եղև մէկ ասն:

Երթամ պատմեմ Ադամայ, Թէ զՔրիստոս մարմնով ես տեսայ, Ահա է խաչ բարձրանայ, աղատէ զճնուողն Ադամայ.

Ձդժոխն աւերել կամի, ազատել զՀողիս որ անդ կայ, Ի վեր է յերկնս Հանէ, Հրեշտակացն առնէ գերակայ:

Աւաղ ու Հազար բերան, Թէ ի՛նչ խելօք էի անխեղացայ, Ասի Թէ վաճառ անեմ, է շահուն տեղն զենեցայ.

Ասի Թէ բարև մի տամ, այն կուոցն որ մարդ չիմանայ, Նա զԹաղս է գլխոյս առին, Հանց շուտով որ ես չիմացայ:

Ձինչ որ ես Հետ ինձ արի, չիւր արեր ոչ ոք Հարամի, Շիշայ մի Հալած ոսկի է գետին է վար վաթեցի.

Անցաւ է գետնին ներքև, ես դարտարի է վար մնացի, Ի՛նչ անեմ յետի անունն, երբ առաջն անունն աւերի:

Ես ասեմ ու դուն լսէ, առ է քո մտքունքդ յանդիճէ, Օղ արն ախանջդ դիւր, զէտ կարմիր զեկան ծրարէ.

Այն մարդուն է խէչ մի նստիր, երբ երթաս զքեզ զբուցէ, Ձնեան յետ քեզ նետէ, ու զաղեղն դառնայ պահէ:

Մէկ մարդ մի գիտատան ունի, զվարդին տակն կու փորէր,
Պիւլպիւլն և վարդին սիրուն, զիւ շինին յառաջ կու բեբէր.
Արծիւն է յաւան ելեր, ու կասէր թէ այդ ինչ չաջապ էր,
Թեպտեմ չիմ թեա ընկեր, նեա եղեր ու զիս կու խոցէ:

Երբ ես է աշխարհս եկի, գառն անպարտ ու մեղք չունէի,
Ի յաւազանէն ծնայ, զէտ զմարգարիտ ցոլայի.

Մեծցայ ու մեղաւոր եղայ, չիմ ոտօքս է մեղք գնացի,
Զկամք սատանային արի, շանդենէն խապար չունէի:

✓ Կուզես որ յազիզ կենաս, որ ամէն մարդ զքեզ սիրէ,
Գուն Հողուն նման կեցիր, որ ամէն մարդ զքեզ կոխէ:

Քան գերկաթն այլ գրնչ ամուր, որ կրակն զինքն կու հալէ,
Գու ջրի նման կեցիր, որ կրակն չիւրնէ կու վախէ:

Լաւ մարդ եմ նորա կասեմ, որ բանայ զբերանն համով,
Հանց գուն գեղեցիկ լեզու, որ լնու տուն մի ճուհարով,
Աստուած երբ զաշխարհս արար. զհողն, զջուրն, զքամին հողի,
Մթխալ մ' աւելի չարաւ, կռեց զամէնն չափով:

Կաճայ մի կամիմ ասել, որ արժէ ճուհար մի բոլոր,
Մարմին է մի նաւու նման, խելքը ծով, թէ չունիս ժխոր,
Միտքը նաւարար նաւիդ, որ բարձր ես գանձ շահաւոր,
Թէ եղն ծովիդ հանես, նա առնէ զքեզ փառաւոր:

Կանթեղիկ մտիկ արն, ջուրն ու ձէթն ու հուրն իման,
Կանթեղն է մտաց նման, ջուրն ուսման, ձէթն գիտութեան.
Քանի զմիտքս սուրբ ունիս, դու սիրով ջանայ ուսման,
Հոգիդ է պայծառ գունով, որ լոյս տայ քեզ մթութեան:

Հայր մեր որ չերկինս ես դու, բարձրութիւն քեզ կու վազելէ,
Եւ սուրբ եղիցի անուն, առաքեալ և բանն է հօրէ.

Զինչ զԱհարօնի գլուխն, որ ծաղկանց իւղովն օծեալէ,
Կամ ցօղ Ահերմօն լերին, Սուկաւ լեառն բուսեալ է.

Ո՛չ գարունն ջուր կուզէ, ո՛չ աշունն թոռմելու է,
Հանց գուն ծաղիկ ո՞վ տեսեր, զարարածս շէն կու պահէ.

Նորա ծաղիկն ո՞վ ասէ. երբ նորա անունն Յիսուսէ:

Այն մարդն որ առ տուրն երթայ, գէմ պիտի զդժարն յանդիճէ,
Շաքարին շատ ուտել չվայելէ. աղամորդու որդին անհողէ.

Մտիկ լեռներուն արն, խելօքնուն ասած մասալէ,
Այն որ բարձր է ձիուն ունի, այն որ ցածն ինչ խօշ կանանչէ:

Մարդն որ է խարխուլութիւն երթայ. գէմ նորա շատ խելք պիտենայ,
Քան զամէնն ցած կենայ, հապա թէ իւր բանն կու լինայ.

Մտիկ գուն ծառն արն. թէ քանի հիւնէր կայ ինայ,
✓ Այն ճիւղ որ զպտուղն ունի, քան զլարտակն չէր ցած կու կենայ:

Ո՞վ որ սիրոյ Տէր մարդուն չողորմի, թող զինքն մեռնի,
Իր մահն է մորն լինի, չիւ բերնին հաղորդ չգտնուի.

Աղուէնն իւր լալիան լինի, գալ ու ագուան իւր հաբեղանի,
Շունն ալ իւր մատաղ լինի, ու ագին զէտ մոմ թող վառի:

Պիւլպիւլն է չեզին մտաւ, է վերայ վարդին թառեցաւ,
Երաց զիւր բարի բերան, և ասաց մինչոր լուսացաւ.

Վարդն ալ է փշ յիջին, սուտ է քուն է զայն իմացաւ,
Խղտեց զիւր կանանչ շապիկն, զկարմիր մի շուտով հաղաւ:

Սկին ու բերն խապար, պիւլպիւլին թէ վարդն մեռաւ,
Պիւլպիւլն է վարդին սիրուն, սև ներկեց զշապիկն ու հաղաւ,
Շուտով մի բերն խաբար պիւլպիւլին թէ վարդն եկաւ:

Պատուեց զիւր սեռիկ շապիկն, խատուտիկ շուտով մի հաղաւ:

✓ Գիշերս ես է քուն էի, քունս է ներս սրտիկս երեցաւ,
Սկին ու բերն խապար, քո սիրած եարն զքեզ մուացաւ.

Մանկտիք, ձեր արեդ ասեմ, լսեցի լեզուս կայեցաւ,
Շուտով զեդ ու ճար արէք, որ չասեն թէ յանկիւմէն մեռաւ:

✓ Սէրն երբ է յաշխարհս եկաւ, եկաւ իմ սիրտս թառեցաւ,
Հապա չիմ սրտէս է դուրս, չերկէ չերկիւր թափեցաւ.

Սկաւ է գլուխս ելաւ, և չղեզս էլաւ թառեցաւ,
Աչիցս արտասուեմք ուգեց, նա արինն է վար վաթեցաւ:

Մեր Տէրն է չերկինց է վար սիրտ ելաւ, թէ գամ սատանայ,
Առնում զԱդամայ հոգին, ու գրեմ է թղթին վերայ.

Զճնունդն ալ է հետ հանեմ, աղատեմ է հետ Ադամայ,
Զդժոխն ալ աւար առնեմ, թէ հաղար շինես, սատանայ:

✓ Մորձիկ մի երեա բարև, իմ ամէն խոցս նորեցաւ,
Աստի կու սիրեմ զքեզ, իմ խօսից ճուղապ չի գտաւ.

Գարձաւ զայն ճուղապ երեա, թէ ինչ անեմ լեզուս կայեցաւ,
Քո սէրդ է գլուխս ելաւ, սև ճիւղէս է փորս եփեցաւ:

Քո սիրուդ մտիկ արի, նա զէտ նետի չարխէն ելաւ,
Ես անմեղ կանգնած էի, եկաւ իմ սիրտս գամուեցաւ.

Մանկունք ձեր արևնուդ ասեմ, այս նետտիս որ չիս գամուեցաւ,
Շուտով տեղ ու ճար արէք, որ չասնն թէ յանկի մեռաւ:

Ի յարեւելց ի վար, ելեր մեր տէրն կուգայ,
Նէք որ ի դէմն երթանք, որ նորա սիրտն չի մընայ:

Հնդուն թագաւոր փատիշահ, ոչ եկեր է և ոչ պետի գայ,
Արեւելքն ինքն է նստեր, յարեմուտք Հիւքմն կու խողայ:

Աստնորս է չորս քէօջայ, լոյսն ընդ որ կենէ մէյ ասա,
Լոյս ի յայն տեհէն կելնէ ուր քրիստոնէն յաղօթս կու կենայ:

Մէկ մարդ մի այլ զլոյսն թողեր, դէմ ի մութ յաղոց կու կենայ,
Չայն շուն ընութիւն ունի, սատանին մասն կայ ի նա:

Պիտէր կաթ մի յայն գինուն, որ խմեց Յնովք—Տղիա,
Խմեց Տէր Գրիգորն, Հայոց, ասաց թէ Հանգայ:

Հայ երամ, դուք էր կուլայք, գիտէք, որ ձեր Տէրն տի գայ,
Շատոց մթան լոյս արեր, կու վախէք թէ ձերն ուշանայ:

Կարմիր վարդ կանանչ թուփով, կանանչ թուփ կարմիր խնձորով,
Քանթ կենամ քեզ ապով, քանթ մէկ երիմ կրակով:

Կու սիրեն սրտով, կշտացեր եմ սուտ խաբելով,
Թէ չեմ սիրեր ըղբը սրտով, սուրբ Սարգիս, Աստուած քեզ խուով:

Ծաղիկ այն ծաղիկն կասեմ, որ օձու բերանն է բուսեր,
Լուկ մարդ, ի յօձուն ահուն, զայն ծաղիկն հոան չէ աուեր:

Մանուկ մի հոռմանց է ելեր, զարեուն թարիկին է տուեր,
Զօձիկն արեհն Հաներ, ու զծաղիկն բերնէն աուեր:

Ծառ մի կայ նարինձ կու տայ՝ ծառ մի կայ նարինձ ու թուրինձ,
Ամենայն ծառ պտուղ կու տայ, թէ ուռին չիտայ՝ նա Համ Բնչ:

Շատ եար իր եարին լուեր, թէ դու այլ լուես նա Համ Բնչ,
Շատ մարդ ի սիրուն մեռեր, թէ դու ալ մեռնիս նա Համ Բնչ:

Կանչեմ հող ի վեր Աստուած, իմ մեղաց ճարակն ի քէն է,
Աստուած իւր բերնովն ասաց, քո մեղաց ճարակն ի քէն է:

Էրէցն ու աւետարան Աստուծոյ մօտիկ նշան է,
Զինչ որ շարթուն մեղք դարձես, կիրակի դայն խօստովանէ:

Առնուս անթառամ պտակ, անդենին հուրն զքեզ չերէ:
Կանչեմ հող ի վեր ստեղծող, զամենայն դարիպ դու պահէ,

Իմ եարն ի դարիպութիւն, իր կրակն զիս կու երէ:
Զիր գալն ինձ շուտով արէ, զիմ ամենայն տէրտս նա գիտէ,

Զերես երեսին դնեմ, որ հոգիս ի ծոցն ելանէ:

Այս առաւօտուս լուսուն, գայր ջրէն ձայնիկն զղղուեն,
Այն իմ Պէօֆայ եարին, ձայնն անուշ էր քան զամենուն:

Բարակ սիրոյ տէր մարդուն, ինքն ու իր եարն մէն ի քուն,
Պաք տան ու պաք առնուն, զօլայն էն մէկալ գիշերուն:

Հանցքուն եմ ի քո սիրուդ, զԲնչ ամպերն կառնեն շառափ,
Չայդ երկիրն ամէն գիտէ, սիրոյ տէր եմ հետ քեզ խարապ,

Այս իմ նենգաւոր այերս, չի կենար մէկ պահմ պարապ:
Կուլայ զօրն զքեզ կուղէ, չի առներ այլ մարդու տալապ:

Վարի վարձինակը եմ ես, արգելէ մ մարդ, թէ կարես,
Թուչիմ այլ երամ խառնիմ, գաս ի հետ ճանչել թէ կարես:

Ոսկի խաֆէս այլ շինես, զիս ի ներս դնել չկարես,
Զերկիր բարեխօս բերես, զիս ի տուն տանել չկարես:

Կարմիր ու ճերմակ երես, քանթ մի զիմ սիրտս արունես,
Անցնիս թուրն ապուրն ետե, ամպ ու գոլ առնես զիս էրես,

Քանթ զայս երաժս երես առ քեֆին ու դիւր զիս ի ներս,
Հեռի քեֆինն ի քէնէ, Հանց ծոցս արեկ մուտ ի ներս:

Յարխարհս ես ի ժուռ եկայ, չգտայ ըղբը սիրելի,
Զխելքս ի վրաս բերի, զբազուկս արի սիրելի:

Քանի բազուկս ի բան կենայ, շատ եղբայր ու շատ սիրելի,
Բազուկս ի բանէ ընկնի, ոչ եղբայր և ոչ սիրելի:

ՅԲնչ ես եղներ ու դեղներ, երեսիդ գոյն գնացեր,
Գէմ քո եարն չէ մեռեր, կամ օտար երկիր գնացեր:

Թէ լամ նէ թոնգ ես լամ, ես գիտեմ թէ Բնչ եմ կորուսեր,
Ներ իմ հոգուրն հոգին, ամհոգի ի վար մնացեր:

Յաւուրն ի հազար պահուն, Տէր փրկէ ի մարդոյ շառէն,
Մարդոյ շառն այնչափ չար է, որ գաղանն չերմէն կու վախէ:

Զառիւծն ի դէնձիլ դրամ, գաղանայ գլխաւորն է,
Արծիւն ի յաւան ելեր, յաղամորդուրն յահէն կու վախէ:

Ես ասեմ ու դուն լսէ, մայրն օրհնամ որ զքեզ բերեր է,
Մայրդ երբոր զքեզ իբեր, գէմ յասաց թէ զերկիրն էրէ:

Կրակն ի չերկնից ի վար թոնգ զքո մայրն ամէն էրէ:
Որ զիս ի քէն իգատ, զքեզ չեանէ օտար կու պահէ:

Պիւպիւրն ի ծովն միջին, ի օձուն բերանն ու կասեր,
Թոնգ ես եմ ի յայս հալիս, թոնգ իմ վարդն գէշ չքաշէ:

Վարդն ալ եփշե մեջին սուտ ի քուն էք զայն հու լսէր,

Լուկ եւր շարեղէն շապիկն ի չորեքդիմաց հու խզաէր:

Ես այն հաւերուն էի, որ գետին հուտ չուտէի,

Թռչի ի կամարն ելնի, թէ սիրուն ահաատն ընկնէի:

Եկաց յայն ահնատըն ընկաց, որ ես ալ յանկի վախէի,

Ամէն հաւն ստովք ընկնի, ես ստովքս ու վիզս աւելի:

Փոքրիկ վաճառական մ' էի, իմ անունն էր Թաւաքալի,

Թաւաքալի Աստուած արի, ձգեցի դիտու ի ծովի,

Գնաց յայն կղզին ելաւ, որ ճուհարն ի հոն հու քուսնի,

Ճուհարն որ իմ ափս ընկաւ, չէր ընկեր ի շատ սովեցի:

Ողորմ ու լալի հաւուկ, քան զկասկած հաւու չըլինաց,

Ոչ գիշերն քուն ունի, ոչ ցորեկն ի վար հու կանկանի:

Մէկ պահ մի դադար ունի, որ չտեսնի ի վար հու կատուի,

Երկու կաթ արիւն կաթէ, յաչեքուն համայ հու թռչի:

Թէ չուզես որ քիւֆր ասես, ձեռքդ տար ու սերտդ բռնէ,

Ոչ քիւֆրըն քեզ հաց բերէ, ոչ թացան, թէ նկատ ու ծախէ:

Անշահ ու անօգուտ բան է քիւֆր ասելն, բայց մեղանքէ,

Սաասնայն չիւոցք ասաց, դեռ յանկից ի վեր հու վայէ:

Հայ իմ մէկ ու մէկ Աստուած, մէկութիւն քեզ հու զուլէ,

Ձոր որ դուն ի վեր տանես, մարդ ի վար բերել չկարէ:

Ձայն հացն որ դու տաս ուտել, խիկ մարդ խիկ չկարէ,

Ձուրն ի կենաց աղբերէդ, ով ըմբէ անմահ մնասցէ:

Կանչեմ հօտ ի վեր Աստուած, որ իմ ձայնս քեզ համնի,

Թող աւաղանի ծնունդ ի սիրուն պէլան չի կրի:

Մէրն ալ դէմ օսվի ունի, ու ձեռուի դէտ զհարամի,

Եկէք հարամիդ տեսէք. հարամի ու նետ մի չունի:

Եկեր ի փողպատս առեր, չեմ երթար նի քարը հու տանի:

Արեք ի ծովերդ իջնունք, որ ձկներ սրանք վարմով,

Առնումք դնա ի տուն տանեմք, ու եփեմք զինքն բարկ կրակով:

Ձկներն ինծի հանց ասին, թէ լցաւ մեր սիրտն արիւնով:

Երբ ես արեւն ելնեմ, թող ցամքի չուր դետ կաց ու ծով:

Քանի դու ինծի էիր, նա կանանչ ու ցողն ի վրայ,

Երբ դու որ չիննէն ելար, ձկն երեկ եղեմն ի վրայ:

Թէ այլվի իցի դառնաս, ու կենաս խելացդ ի վրայ:

Երթամ բարկ արե լինամ, գամ կանգնիմ ի կամարիդ վրայ:

Լոյս ծագեմ ի քո վրայ, որ սաստիկ ձկնն վերանայ:

Դաւիթ արքայի սրբին Սողոմոն, զայն մեզ հու ասէ,

Ձխրատն իմաստնոցն դու տուր, առաւել նա զքեզ սիրէ:

Անգէտ անիմաստ մարդոցն խրատ տաս նա զքեզ կատէ,

Թուր ու դանակ առնու, թէ կարնայ նա սպանանէ:

Գանգատ եմ ու խոց եղբարք, սիրտս ի վեր արիւն կու բերէ,

Ի մանկութենէ ի վեր զիս ուրման հոգն հու մաշէ:

Եկեր եմ գերի անկեր, ճար չկայ որ մէկ մի թափէ,

Դատիմ զէտ զամէն մշակ, նա մարդ կայ որ դեռ հու խոցէ:

Ձորս բան խրատ առ չինէն, որ ամէն աշխարհս քեզ ատէ,

Ձայլոց մեղքն դու մի քններ, զքոյդ գերիար մտօք քննէ:

ՁԱստուած մօտ ի քեզ դու տես ու զմահուն օրն դու չիշէ,

Ձխրատս դուն ի սրտիդ տնկէ. զքեզ ամէն չարէ հու պահէ:

Ձայլոց մեղք դու մի քններ, որ Աստուած զքեզ չդատէ,

Ձքո մեղքդ խիկ մի մուսար, որ խոնարհ զանձը քո պահէ:

ՁԱստուած թէ ի մօտ տեսնուս, մեղքն խիկ զքեզ չխաբէ,

Ով որ զօր մահուն չիշէ, նա զաշխարհս խիկ չտրէ:

Խակ դու տեսար հէրեֆ, գրին է խում որ գտունն է շիներ,

Կամ ինչ տան . . . խմօղ որ աղպաթն ի չինքն է հասեր:

Ձհաւանն ի մէջլիս գրեր, թէ շինեմ ու գտունն աւերեր,

Ձերկուս այլ աւեր թողեր, երկուքէն մահրում գնացեր:

Ի չիմ շատ մեղացս ահուն զիս երերն ու լացն է աւեր,

Ոչ ով չէ պատճառ եղեր, չեմ այլոց ձեռօք խաբուեր:

Յիմ սրտիս կամաւն յօժար յամենայն մեղքի եմ հանդիպեր,

Միոյն հակառակ կացեր, զօրինաց ցանկն եմ պատառեր:

Ձերկուսն ի մէկ տեղ բերամ զէտ ընկեր կասն թէ պահէ,

Ու չորս բնութիւնս օտար հետերաց կասն թէ սողէ:

Հինգ գունն է ի բաց թողած զայդ ամուր կասն թէ պահէ,

Հոգիս իմաստնոց միջին զէտ հրակ՝ որ զմօմն հալէ:

Ձերկու ընկերացն ասեմ, մէկն հոգն է, մէկն հոգին,

Հոգին թէ ի վեր քաշէ, հոգն ծանար ի վար հու հակէ:

Վախեմ թէ հողոյս լսեմ նա հոգոյս լոյսն պակասէ,

Հետ հոգոյն ամ, ով թռչի երբ նորա տունն հեռի է:

Չհինգ դուռն է և բաց թողած զայդ ամուր կասեն թէ քակէ,
Այս բերդս է գանձով իւր ու հազար չարկամ կու մտնէ:

Չչարկամս ես և չիս ունիմ, զդուռնին զամէնն կու փակէ,
Թագաւորս է և ներս նստած, նա զայս ալ գողն կու խարէ:

Աւաղ զայն որ շատ դատիս մարդ չկայ որ զեւն ճանչէ,
Հաշուէ թէ ճուհար ունի և խողուն առջև կու վաթէ:

Թողն զճուհարն մնց ճանչէ, զօրն և բուն զաղբն կու փորէ,
Կոխէ նա զքո ճուհարն, ու զընչով զբեզ կու դաղէ:

Սատանայ տեսաւ զՄովսէս, արգելեց ու պահ մ' ալ և լաց,
Իմ Աստուածախօս Մովսէս, մեր Տէրն էր մեզ է խոսոված:

Երբ մեք աշակերտ էաք Աստուծոյ Ադամ չէր ստեղծուած,
Ադամ և հողոյ ստեղծած, մեք և մեր փառացն անկած:

Հաւատն անառիկ բերդիկ ո՞վ առնէ զնա հայրենիք,
Թէպէտ թշնամիք ունի, որ բերեն ինձ շատ մըճենիք:

Թշնամին հեծել կապէ, կու լինայ և նա նետածիք,
Նա զնա մասխարայ գնէ թքանէ զէտ զիմաճիք:

Ի չերկնաւորաց դասուն Սաղաչէլ երես է շրջեր,
Ի չերկնից յանուկոս է ընկեր, և լուսուն մահրում մնացեր:

Չադամ և դրախտէն հաներ, յանասնոց չերկիրս է ձգեր,
Ամէն աղամայ որդիք այս օտար երկիրս է բնակեր:

Չանգէտ անդգամ մարդոցն հետ երթալն խիտ դժար է,
Մարդ որ անդգամ լինի զընկերին խրատն չգիտէ:

Ընկեր հետ անօր եղեր, զինչ որ դուն ասես նա լսէ,
Երբ դժար տեղաց առնուս նա գիտնաս որ բեզ ընկեր է:

Արեկ որ խրատ մի տամ խելք ու միտք ունիս նա լսէ,
Հետ անգէտին մի դատեր, թէ հազար որ զբեզ կու սերէ:

Անգէտն է և հուր նման ուր ընկնի զտեղն կու հրէ,
Գիտուն է և ջուր նման, ուր երթայ կանանչ բուսեր է:

Չխրատ այն մարդուն դու տուր, զինչ խրատ տաս նա լսէ,
Անգէտ, անիմատ մարդոցն, շատ ասելն ան ինչ օգուտ է:

Թելօքին խրատ երբ տաս, բարեկամ զբեզ կու գիտէ,
Անգէտին խրատ երբ տաս, նա չարկամ զբեզ ճանայէ:

Գաւթ մարգարէն ասաց, թէ չարկամ ունիս, նա սերէ,
Չձեռքն բռնէ և տուն տար, ու անուշ լեզուովդ նա պատուէ:

Չկթխայն լից և յափն տուր, իւր բերանով զինքն անիծէ,
Թէ Աստուած զայս տուն շէն պահէ, ու զչարկամն գլխավարէ:

Քան զԱդամ այլ ինչ հարուստ, որ ունէր զըրախտն առնձին,
Սատանայ և օձ մտաւ, օձն չեւայ՝ զԱդամ խաբեցին:

Ի Պաղոյն ուտել տուին, և փառացն մերկացուցին,
Տերև թղենուցն տուին, և դրախտէն հանին, վարեցին:

Չուր որ կու սերէ Աստուած, սակաւիկ մի աստ կու տանջէ,
Թէ սէր և սրտանց ունի, առ Աստուած չարին համբերէ:

Թէ փորձէ նա սէր ունի առ Աստուած, նա խիտ յօժար է,
Տանջանք կու թուի նմա, թէ իւրով զանձն կօծանէ:

Ո՞վ իմ խրատիս լսէ, նա զանանց բարին վայելէ,
Յանդէն պարզերես երթայ, և յօճեքէ իսկի չվախէ:

Յորժամ չարութիւն լինի, փողն երեք ձայնիւ տի կոչէ,
Ո՞վ առէն բարի կացեր, նա զեկայք ձայն տի լսէ:

Կանչեմ այս ծովիդ վրայ, ծովդ և յակէն թանաք դառնայ,
Չինչ իշամբ եղէք, որ կայ, ամէնն ինձ գրիչ պիտեանայ:

Չինչ հրէք ու խաբեղայ դանուշման, որ գիր գիտեանայ,
Գրէ չկարնայ կարգաւ, զինչ և չեմ սիրտս կայ զուսայ:

Յաշխարհս ես իժուռ եկայ, լուկ անգէտ մարդուկ մի գտայ
Թողեր է զցամաքն և բաց, երբուն և ջուրն կու գնայ:

Շիներ է փայտեայ տապան, այն տախտակն յապով կու կենայ:
Օր մի ընկղմի տապան, լուկ լինայ ձկան նափաղայ:

Շատ էր յայդ ծովերդ մտեր, լողացար, այլ չես ելներ,
Մօտ իյալին ես եկեր, զիս սարսափն ու դողն է պատեր,

Բազկիդ զինէհար ընկեր, թէ լողայ ան զիս ել և վեր,
Շատ դու ինձ ատէն հասեր, հեծնի ինձ չէք ես խառվեր:

Գարձաւ ինձ ճուղապ արաւ, զբեզ մեղաց ալիքն է թացեր,
Շատ մարդ է յայտ ծովդ ընկեր, մուրթեր ու անհուն կորեր:

Նշեր մօտեցեր եմ ես, վախենամ քարի դիպեանամ,
Քակի իմ աղւար շինուածս, ու տախտակն մէկ մէկանայ:

Ա՛յ իմ նշենի ծառիկ, ծաղկեցար ու դարձար և նուշ,
Բերանդ է աղուշ մաղուշ, պըռկներդ է ամբաւ ու նուշ:

Չայնախդ (զարաղ) որ ափիդ ունիս, դու խմէ, որ ստեմ անուշ,
Պագենմ զայդ բերնիդ բօլորն, որ գինուցն հօտ դայ անուշ:

Այն մութն ու խաւար տարին, քեչկէ չե՛ր բերեր մայրս զիս, բերաւ սիրոյ տէր արաւ, սերոյ տէր, որ կ'ենէն հոգիս. Կասեմ թէ կենէն հոգիս, նա կասեն թէ թող մեռնիս, Ասքանիս զուլում մի տեսեր, որ զմանկան մահն կու կահիս:

Խիտ եմ կարօտցեր իմ եար, դուն աժե՛ս որ կարօտանամ, Ո՞վ որ զքեզ իջիս բերէ. թէ զհոգիս ուղէ նա կուտամ. Քանի որ սպրեր եմ նա քաշեր եմ շատ տէրտ ու դամ, Զի՛նչ շահ իմ շատ սպրերոյս երբ և քէն կարօտ կու կենամ:

Իմ եար, խղճայ քո գերուոյդ, քո գերուդ մէն մէն կենալուդ, Գաղտնի, ալանի լալուն, վախեմ թէ ելնում աչերուն. Լսեր եմ որ վարդ ունիս. ուղարկի տեստէ մի գերուն, Պագնեմ—աչերուս դնեմ, որ դադրի աչերս և լալուն:

Իմ եար քեզ վատ չեմ ասեր, դու հիմի էր ես խռովեր, Խամազ կայ և մեր մէջս, քեզ դալատ է հասկացուցեր. Ղամազն է, և օձ նման, որ զՍդամ զալտեցուցեր, Խաբեր և դրախտէն հաներ, և լուսուն է մերկացուցեր:

Նրկինք որոտաց 'դողաց' աստղն իսկի և տեղն չմնաց, Իմ եար երբ չինե՛կ ելար, բիւր հազար ծաղկունք և հորաց. Իրեմ ես բարակ թղթիկ, ուղարկեմ շատ պատգամ իլաց, Որ տեղ ես բարով կացեր, քո սիրած եարն չմոռանաւ:

Փսքրիկ բոլորիկ դռնակ, որ և քէն ծագեց լուսնակ, Քո մէջքդ է քան զուր բարակ, քո ծրծերդ և մէջ բարունակ. Իմ եար երբ դալդ ինձ ասիւր, դու սպրիս հազար ժամանակ, Ես այլ և աւուրս և վեր, և ծոցոյս առնեմ քեզ ճարակ:

Փսքրիկ բոլորիկ շամամ, երբ լինի սիրոյդ տիրանամ, Քո սէրն չանատակ ծովուն, ու քեաֆիր ալին պահապան. Նրթամ հօքմ դէմ լինամ, դամ ընկնիմ և ծովդ ու լողամ, Այնչափ ել ու մուտ առնեմ, չինչ որ քս սիրոյդ տիրանամ:

Նման ես և չաչն ոսկին, որ Մըսրայ ծէրն կու պահէ, Քո ձայնդ և չերկիր ելեր, զքո խցմէթդ մարդ չգիտէ. Զքո խցմէթդ ես գիտեմ, որ ճիկէրս և փորս եփեր է, Սրտիկս և չողեղ նման, գերիդ լար է արիւլում է:

Պաղջայ մի տնկեր եմ ես. թէ ի՛նչ աղէկ մորճեր կայ և ներն, Մնուցի ու և հասկ բերի, խլեցին զայն կու լամ ես.

Զէտ մանկալորուտ կաքաւ, և լեռնեցն և շուրջ կու գամ ես, Լսեր եմ ահնատ ունիս, բեր լարէ գամ ընկնիմ և ներս:

Տեսայ զիմ եարն նստած, դէտ հաղար լուսին բոլորած, Զէտ զարեգակն վառած, դէտ պայծառ աստղն զարդարած. Զտոկունքն ալ և ջուր իղիւր, զնունայ ձեռքուն ալ լուաց, Կտուածի թէփսին դրած, արմաղան դրած բաժանած:

Ձինակն և ջրէն հանուի, ջուր մ' ալ ձգեն նա սպրի, Հանցաուն եմ և քո սիրոյդ, զինչ ձկնակն որ թալէ թլի. Զձուկն և ջրէն հանեն, նա տըտան տայ ու մեռանի, Նրբ զիս իմ եարէն դատեն, մեռնիմ ու այլ ճար մի չլնի:

Արեգակն ու պայծառ լուսին, որ կելլեն և մէկ թապիհէ, Իմ եարն և տանէն և դուրս, գերիւքին լոյսն կու պատլէ. Նման այն աստեղն ես դուն, որ ամէն' անաւօտն ելնէ, Քիչ քիչ նա և վեր կու գայ, զբարիլոյսն և հետ կու բերէ:

Իմ սիրտս և քո վառ սիրուդ, դէտ աշնան զաղէլ կու դողայ, Արտսունք և չերեսս և վեր, դէտ գարնան անձրև կու ցողայ, Հոգիս և չինե՛կ ելաւ, մէկ մի քո ծոցոյդ ճար արմ, Ծոցիկս է ծոցիդ սովոր, այլ ընդ սր երթայ մէկ ասն:

Հայ իմ սերկիկ մորճիկ, չինչ ատէն էր սիրելու, Զար փուշն է և քեզ պատած, որ չկայ ճարակ մտնելու. Զար փուշ պատողին ճկուն, ես հաղնիմ ճաղան կուր, Դամ մտնում ու վարդ քաղեմ, թող հոգեկս և տեղն ելնու:

Յնւր էլիւր, ուստի եկիր, անձանօթ, ու զիս սիրեցիր, Զկրակն և թէղնիկդ ունիս, և ծոցիկս և վար վաթեցիր. Զծոցիկս ալ բուրայ արիւր, լուկ գոսկին և ներս հալեցիր, Ոսկին ալ հալխայ արիւր, չիմ սրտին չախանջն անցուցիր:

Յէրէկ չէ այսօր տեսայ, խնձորի տալիկ մի հուսայ, Թէ սպրիմ և չարև մնամ, թէզ հանեմ շուտով ջուր ինա. Զուր Յորդանանու բերեմ, ու ջրեմ որ անմահանայ, Ի շուքն հանգչեմ ես այլ, պտղուն վայելեմ նմա:

Իրեւս որ դուն պարծենցար, թէ ձերմակ ծոցս քեզ ծառայ, Յեակ փոշման եղար, խրատն մի երես մէկ ասն. Ինձ խիփն ու զուսայ կու գայ, քո ծոցուդ այլ մարդ տիրանայ, Պագնէ զիմ պագած տեղիքն, լուկ դնէ գերեսն և վերայ:

Գիշերս ես ի դուրս ելայ, թէ եար մի գտնուեմ սիրելու, Գրոզն ալ ի դէմս ելաւ, լուկ նազար արաւ տանելու:

Գրոզ, անհաւատ Գրոզ, դեռ մահուակ եմ չեմ տանելու, Եկու տանելուն ցուցնեմ, տանելու զշին զարնելու:

Զայտին ալ ափին ունի, ոչ խմէ, ոչ տայ խմելու:

Արեգակն է քո սանդղծուած, լոյս հուտայ ամէն ալամիս, Ասեն թէ կաթով է շաղուած, այդ ճերմակ ծոցիկդ որ ունիս:

Մշկին փարուարիչ կուտայ, այդ անուշ հոտիկդ, ո՞ր ունիս, Զպաքրին քան դու ունիս, որ չանդու անուշ կու խօսիս:

Թուխ աչք ու ունքեր ունիս, լայն ճակատ ու կարմիր երես, Այդ ճերմակդ որ դուն ունիս գլխամա՞մ ծրծրդ որ ի ներս:

Մեռնիս ալ անդին երթաս զայդ ճերմակ ծոցիկդ թի՛նչ առնես, Զամէն որդներն ուտես, դու էր զիս մահչում կու պահես:

Ի՞նչ անեմ, կամ թի՛նչ լինիմ, կամ թէ թի՛նչ ունիմ կատարած, Հնչ վնչ իմ սիրած եարն, զէտ կատղած շուն զիս էլած:

Կանգուն մի դանակ ունէր, անողորմ սրտիս էած, Ո՛չ ինքն Աստուծոյ վախեց, ոչ չելեց օրիկ մի աղու հաց:

Ի՞նչ անեմ, կամ թի՛նչ լինամ, չեմ աւտար, ու չեմ մոռանար, Հազար եար կուտան փոխան չեմ առնուր ու զքեզ չեմ խտար:

Արեկ զայս ալէմս իժուռ, բեր ցրցուր զէտ քեզ մէկմ ալ, Որ տամ զիմ սրտիս ումէտդ, աչերուս ասեմ, թէ մի լար:

Աշուն էր եղաւ դարուն, անհ քանի կենանք մեք ի տուն, Եկէք որ պաղջան մտնումք, ու խմենք հետ ծառ շքերուն:

Պլպուլն ի վարդին սիրուն, համբերէ զինչ մանչն ի դինուն, Նստեր ի վերայ ճղին, սաղմոսէ ինքն տունէ տուն:

Այս աստղորին վրայ սիրոյ Տէրն ամէն թի՛նչ կու շահի, Բուպի մի վաճառ առնէ, ի հաղար դեկան կու լինի:

Ելնէ հօր ու մօր աչից սիրելեացն ամօթն աւելի, Թափի երեսի ջրէն, չիւր ոսկի անունն աւելի:

Աշխարհս է կանանչ մարդեր, մենք ի մէջն եմք կաքլոյ ձագեր, Գրոզն ալ բաժան ընկեր ու կրէ մէկ մէկ զէպ ի վեր:

Եղբարք երբ ի հաց նստիք, ձենեցէք ձեզ մէկ մ' ալ ընկեր, Մեռնիմք ի չանդէն երթամք, նա նստիմք քան զմէկ մ'ալ ի վեր:

Մարիկն անիծեց զորդին, իմ որդի դուն զարկա՞նամ, Երթաս ի յօտար երկիր, զզարկային զաարն գիտենաս:

Զքարն սնարք առնես, ի վերայ աւաղին քնանաս, Վաղվէնէ քնէն ի վեր ելնես, քան զԱստուած ալ ճար չունենաս:

Սիրեմ զայդ սիրուն երեսդ, որ լուսին ի մօտն է գերի, Պագնեմ զայդ բարիուկ պուկունքդ, որ շէքէն ի մօտն է լեղի:

Թուխ աչք ու կամար ունքերդ, քան զծովն կու դարնէ ալի, Բերնիկ է իշիչ նման որ վարդին ջրովն է իւր:

Սոխախովդ ի վար կուգի, լուկ մէկ մի ուշիկ ձայն էած, Դառնամ ի չետիս նայեմ, խօշարս է կանգներ շար շապկանք:

Զլաչիկին թուլ ու մուլ կապեր, զիէս ճակտին թողեր է ի բաց, Թուխ աշուն ծարուր քաշեր, էդ քա՛րիկդ ելեր յօրինաց:

Այս աստղորին վերայ, դու մատնի ես աին ի վերայ, Դոր, որ պաղ աղբիւր մի կայ, դու կանանչ ես ցօլն ի վերայ:

Խնձոր ես ծառին ճղին, ես կանանչ թըլիկ ի վերայ, Վախեմ թէ աշունն գայ զքեզ քաղեն թուլիս չորանայ:

Յայդ դաշտէդ ի վայր գայի, անարատ սրտով դէպ ի տուն, Իմ եարն ինձի դիպաւ, դոյնն շատ քան զբարի արևուն:

Զոտկունքս ես արգել տուի պագ մի առնեմ, երթամ ի տուն, Իմ եարն ինձ ճուղապ երետ, թէ կացիւր լինի իրիկուն:

Իմ հայրս ելնէ ժամ երթայ, անհաւատ մայրիկս չէ ի տուն, Արեկ զքեզ ի ծոցս առնում, մինչ որ գայ լոյսն առաւօտուն:

Իմ եար դու չերգիկն ի քուն, ծոցդ լոյս տայր աստղներուն, Կամ ան զիս ի ծոցս ի քուն, կամ տէսթուր տուր երթամ ի տուն:

Ո՛չ կառնում ի ծոցս ի քուն, ոչ տէսթուր տամ երթաս ի տուն, Հանցեղ երեքուն պահեմ, մինչ որ գայ լոյսն առաւօտուն:

Երկու եարուկ զիս կուգի. չգիտեմ թէ ո՞րն է սիրուն, Մէկն ցերեկուան արև, մէկն լուսին մուլին դիշերուն:

Նուրն՝ չեմ սիրեր զքեզ, դուն սովոր ես խոր կենալուն, Երթամ զարեգակն սիրեմ, որ ծագէ լոյսն առաւօտուն,

Ստեղծող զքո սանդղծած ծառայն, մի մատներ իձեռն սիրոյն, Թէ ձեռն իսիրու ձգես, մի՛ մատներ ի խալիս լեղուն:

Մէր զնա գէմ խել արեր, դարձուցեր է զէտ կապելուն, Ով որ սիրոյ տէր մարդոյն մեղադրէ. ինքն է ատելուն:

Ա՛յ իմ աղբերանց արիւն, չապառաժ քարն կենաս դուն, Աչերդ ուռնայի նման, ոչ ի քուն ես և ոչ արթուն:

Վախեմ թէ զքեզ որոան, ու զրկեն զիս էքո տեսուն,
 Առանց քեզ ես ինց ապրեմ, կամ իմ աչերս ասնիք քուն:
 Այն իմ նոսոփար ծաղիկ, այդ ջրեն մէջն կու կենամ,
 Զջուր քեզ պատճառ արիւր, և սիրուն քան զուռ կողովմ:
 Գամ զջուրդ է քէն կտրեմ, որ դարէդ է վեր չորանաս,
 Յաչիցս քեզ առու հանեմ, զքեզ ջրեմ որ պայծառանաս:
 Իմ եար բարձրագնաց լուսին, չմը երթաս գիշերդ անհուն,
 Շատ չերդիք է վար հայիս, կու տեսնես շատ կիզէլ է քուն:
 Եւ զկրճկիկն ալ յարձակս արեր, լոյս դիպեր է մէջ ճրճերուն,
 Շառաւիղ չերկինս տուեր, խաւարեր լոյսն աստղերուն:
 Իմ բարձրագնաց լուսին, շատ բարեւ տուր իմ կիզէլին,
 Զբարեւդ ես է մըր տանեմ, չեմ գիտեր զտունն կիզէլին:
 Գնան է վերայ թաղին, բարձր պատ ու ծառն է միջին,
 Նստեր է ծառին շքին, կիսմէ է լուրջ ապկիկն:
 Կու խմէ ու հայերէն կասէ, թէ ինչ անուշէ սէրն ու գինին:
 Իմ բարձրագնաց լուսին, չի տեսար զիմ եար Մշեցին,
 Էրէկ եմ տեսեր զքո եարն, է յայգին Յակոբոսին:
 Նստեր է վարդի շքին, կու խմէր զկարմիր գինին,
 Խմէր ողորմուկ կասէր, շատ բարեւ տարէք իմ եարին:
 Ես մեռնիմ է քո վերայ, դու վքո ծամդ կտրես,
 Կտրես մաշալայ վառես, ձեռքդ առնուս ու զիս փնտաես:
 Կամ է հող վերօքս անցանես, հետ լնուս դաշերդ ու թափես,
 Գրկիկ մի վրիս ածես, զապառած վէմդ համբուրես:
 Իմ եարն է հարանց տանէն, հանց էլաւ զինչ նաւն է ծովէն,
 Հագեր է զկանանչ ճիւղպէն, ու քաշեր գլխակն է վրէն:
 Իւր շունչն է է յայն մշկէն, որ դրած է է յանպարեկն,
 Երես այն խուճաշ նման, որ հանած է Փռանկաց մէջէն:
 Հանցեղ կու հանէ սրտիս, որ հագնեմ ես այլ մագեղէն,
 Հագնեմ ու լեռներ ընկնիմ, լուկ ուտեմ զամէն խոտեղէն:
 Կասկած կայ իմ սրտիս, կու զարհուրիմ է մահուանէն,
 Վախեմ թէ անէրէց մեռնեմ, ու տանեն թաղին անօրէն:
 Աչերդ է է ծով նման, որ է Մսրայ դուռն է կանգներ,
 Վարսերդ է յալի նման, որ քամին կանէ տարուբեր:
 Քան զուռ ես է վեր վագեր, քան զկարմիր խնձոր բոլորեր,
 Պայծառ ես քան զքեաֆուր վարդ, որ հոտով զաշխարհս է լցեր:

Այդ քո ստեղծողիդ համար, երբ քայլես զուռներդ մի շարժեր,
 Այդ քո աչերուդ խնձերն, շատ մարդու արիւն է խմեր:
 Խօշեար արևուդ համար, որբուկ եմ զիս մի լացներ,
 Տղայ եմ չեմ է կենար. զիս է քո կրակդ մի ձգեր:
 Խօշեար դու հէրեք արն, քու սիրուդ հոգիս կու քակե,
 Արեկ յայն աշխարհ երթանք, այս աշխարհ մեզի չպիտի:
 Երթանք յայլ աշխարհ կենանք, որ անվան կենանք ալանի,
 Քանի տեղս ահող կենանք, ու դողանք թէ ինչ կու լինի:
 Քան դսերն այլ քաղցրիկ պատու է յաշխարհս չաւտամ թէ լինի,
 Շէքէն նշով շաղաճ, մօտ է սէրն է դառն ու լեղի:
 Զհամն ալ առի ես այլ, սիրոյ տէր եղայ հետ քեզի,
 Աչրդ ալ իմ սրտիս դու տուր, քո սիրուդ եմ ճորտ ու գերի:
 Հողեկ թէ տայիւր տէսթուր, որ զծոցիկդ է լետ բանայի,
 Զծոցիկդ ալ պաղ ու պաղջայ անէի. տէսթուրով է ներս մտնէի:
 Երդուի, երդում տայի, այն տէսթուրից դուրս չդայի,
 Այն ինչ անհաւատ գրօղ, զիս է քո ծոցուդ դայ տանի:
 Ժամ ժամ զիմ խաղիպութիւնս լետ չիշեմ ու նստեմ ու լամ,
 Ճապղեր եմ ջրի նման, է յօտար երկիր կու գնամ:
 Յորեկն եմ նետի նման, զով տեսնում է զէմ կու գնամ,
 Գիշերն աղեղան նման, ես լարթալի է վար կու մնամ:
 Կանանչ ու կարմիր ամիս, միթէ մայրն չէր բերեր զիս,
 Ի բեր սիրոյ տէր արաւ, այս քաղքիս այդ հմնուիրիս:
 Երկու երկի կու սիրեմ, երկուսին սիրտն կուզէ զիս,
 Պառիկն առաւել կասէ, մեծն ասէ արիկ մօտ է չիս:
 ԵՐԳ ՅՈՎ ՀԱՆՆԵՍ ՓՈՒԼԿՈՒԻՐԱՆՅՈՅ

Լոյս երեսացդ է խիստ փափուկ,
 Քաղաք խուժան ու Չին մայիւն:
 Թէ տեսնու զվարդդ է Հնդստան,
 Ընդ որ երթաս լետդ կոչին:

Հարուր տարու հաբեղանին,
 Որ ճերմակն է դարձեր դեղին.
 Կտրէ զկօռտիկ պատարագին,
 Ու զքեզ ուղէ յառջև խաչին:

Դու դեղ ես ուրախութեան,
 Որ զքեզ տանեն ի պաղչանին.
 Զծամդ ու զվարսերդ ի վայր թողու,
 Զծոցդ բանաս ի մէջ պաղչին:

Ով զքեզ սիրէ ոնց մեռանի,
 Կամ երեսնին դառնայ դեղին.
 Պարծանք ու վաճ քո ծնօղին,
 Փառք ու պատիւ քո արարչին:

Ով կարէ գովել զքեզ,
 Խե Յովհաննէս Թլկուրանցի
 Քեզ վայելէ ծառայ Խպտի,
 Պուլղար, Զարքազ, Հօռօմ Լալկի:

Ն Ո Յ Ն

Ահա եղև պայծառ դարուն
 Ծաղկանց ազգին ու պաղչանին.
 Դաշտ, աղբերունք դարդարեցան,
 Արօտ հանին գխիլանին:
 Գոյնքն ծաղկին ու յետ կապին,
 Անուշանայ հովն ու քամին,
 Զայնքն ձայն ածէր յայգին.
 Քաղցր կուգայ ձայն պլպուլին:
 Յորդոր գնայ ջուրն ի յառջին,
 Կու թանձրանայ շուքն ի ծառին.
 Զթևն բերէր բօլոր վրդին,

Սիրով խմէր զանուշ գինին:
 Այն վարդին գէմ չկայ գին,
 Որ այն խնդումն հանդիպին.
 Քաւել դրախտն անմահութեան,
 Յորում եղաւ մարդն առաջին:
 Թէ չէր մահուն օրն ու դժոխ,
 Կամ զսարասափ դատաստանին.
 Նա յայտ աղէկ էր, զինչ ասաց,
 Խե Յովհաննէս Թուլկուրանցին:

Ն Ո Յ Ն

Ես զքեզ տեսայ սիրով նստած,
 Արևնման արեգական.
 Զինչ պաղչայ մեծ որ կայ եներս,
 Վարդ ու շուշան:
 Պայծառ ծաղկունք:
 Աչեր ունի գերդ զծովեր,
 Ունքեր ունի քան զթուխ ամպեր.
 Շողայր կլափն ու լար շրթունք,
 Ու մարգարտէշար ուր աղամունք.
 Թէ վարդապետն զձեզ տեսնայ,
 Մոռնայ զուսում ու շատ գիտունք.
 Ամէն անձամբ իրող ելնու,
 Անցնէ զամառն ու ձմերունք:
 Քեզ զինչ զաղար ես դիմանամ,
 Երբ դուք ի հալ հանէք լերունք.
 Սիրով քակէք բերդն ու սարեր,
 Իգիլ հանէմք վէմք ու ափունք:
 Խե Յովհաննէս Թուլկուրանցի,

Զքեզ կու գովէ ոսկի տփռունք.
Վախեմ թէ հուրն այրէ զհոգիդ,
Անշէջ ուտեն անքուն որդունք:

ՏԱՂ ԱՍՏՈՒԱՍՄԱՆԻ

Գովեմ զքեզ զանազան Մարիամ սուրբ կոյս,
Մարմինդ է հոգեղէն հոգիդ բովանդակ լոյս.
Աղամունքդ մէջ բերանոյդ մարգարտահիւս.
Գու գերազարդ ծաղիկ, դու պալասան բոյս:
Մինչ աղամ վարեցաւ դրախտէն ի դուրս.
Վասն այն կամ անճարեալ և կամ տարախոյս,
Զքեզ ունեմ Տիրամայր աղաւէն և լոյս,
Գու լինիս միածին որդւորդ բարեխօս:
Հոռօմ, Պարսիկ, Հնդիկ, Գաղիայի կոյս, թղախ
Զքեզ շարականաւ գովեն անդադար անտուն.
Քառասուն մանկանց վերայ իջաւ քառասուն լոյս,
Քառասուն կուսանաց զլուխ Գայիանէ կոյս.
Արևելք, Արևմուտք, Հարաւ և Հիւսիս,
Չեն քեզի նման սուրբ Աստուածածին:

Բ.

Գովեմ զՄարիամ երկնից գովելին,
Ճշմարիտ չեմ փոխեր աշխարհիս մալին,
Հնդկաց ծովէն ելած գոհարին, լալին,
Մեծի կայսերանիստ Կոստանդնու Պօլսին.
Լեհ ու Գրզլէլմայ միւլք Անատօլին:
Աշխարհս գին չելաւ զիլֆիդ մէկ թելին:

Աղամայ դրախտին խօսուն պիւլպիւլին,
Ձեր հոգիքն ալ այն դրախտին արծանի լինին:
Յակոբայ վերէն սանդուխ իջուցին,
Երկու պահապան կար սաղին ուսօլին.
Այնչափ պահեն հոգիքն տան Ռափայէլին,
Ռափայէլն ի վեր դաս Միքայէլին.
Միքայէլն ի վեր դաս Գաբրիէլին,
Հոգիքն երկրպագեն Էմմանուէլին:
Դառնան Յերուսաղէմ Յուռնայու կալին,
Ինձ նման մեղաւորք որպէս մոմ հալին.
Սէթ ու Մաթուսաղան Մաղաթիելին:
Եղբարքն չթողին Յովսէփ իւր հալին,
Վէրուցին, նետեցին հորին՝ մէջ կէօլին:
Շապիկն ներկեցին արիւնով ուլին:
Յակոբ՝ երդում ըրաւ Մըսրբայ կալին,
Եղկանան, Մարիամ մայր Սամուէլին,
Մովսէս և Ահարօն զլուխ Իսրայէլին,
Շատ նեղութիւն կրեց Յովք Երանելին.
Որք չեն քեզ նման սուրբ Աստուածածին:

Գ.

Մով մեծ Ովկիանոս օր անյատակ էր,
Որու մէջ կգտնուէին մեծագին ակեր.
Ինչ զըտար աշխարհս ծառ կալ պողաբեր,
Մեր Տէրն ստեղծեց Աղամայ թէ կեր.
Համասփիւռ ծաղիկն ունէր երկոտստան թեր,
Այն երկոտստան թերն ալ իւր աշակերտքն էր:
Ինքն նշանակէ Զքրիստոս Տէրն մեր,
Որ և խաչեցաւ Աղամայ խաթեր:

Որուն գերեզման եկան կանայքն իւզաբեր,
 Զսուրբ Յովհաննէս ծնաւ մօր քօյրն Նղսաբեր,
 Դու անգին մարգարիտ, դու ոսկի սափեր,
 Դու ես անսերմն յղու՛մ, դու ես պտղաբեր:
 Հասակդ է եկեղեցի սուրբ ժամաակեր,
 Վարագօյրդ ծայրէ ի ծայր գոյն զգոյն կերպսաներ,
 Բագկեղէն թևեր ունիս, մոմեղէն մատներ,
 Ծով ծով աչեր ունես ու կամար ունքեր,
 Աստուած իջեր ի քեզ սքանչելի յօրիներ,
 Արեգակն ու լուսին քան զամէնն իվեր:
 Որ լերկնից կտեղան ցօղատու ամպեր,
 Քան զլուսինն իվեր փոքագոյն աստղեր:
 Ո՛չ Ննովք՝ ո՛չ Նղիայ՝ ո՛չ Սիմէօն ծեր,
 Ո՛չ սուրբ ճգնաւորք՝ ո՛չ վարդապետներ,
 Այլ ո՛չ ուխտատեղիք՝ ո՛չ ժամատներ,
 Ծնունդ Ադամայ Յեալէ իվեր,
 Չեն քեզի նման սուրբ Աստուածածին:

Դ.

Տիգրիս՝ Փիսոն՝ Գեհոն՝ Եփրատ չորս գետ,
 Այն չորս գետն ալ կերթայ դրախտէն ի Հետ:
 Մին արևելք, արևմուտք, Հարաւ և Հիւսիսապետ,
 Զքեզ ունիմք Քրիստոս բարի նաւապետ,
 Դու լինիս սգաւորաց սրտին Հովուապետ:
 Այն տապանն որ շինեց Նոյ մեծ նահապետ,
 Սեմ, Քամ, Յաբեթ երեքն ալ իր Հետ,
 Զանազան, Զարմանազան, Արեգնազանն ալ Հետ,
 Ինքն էր Նոյայ զարմէն մող և միապետ,
 Խօստովանահայր Մելքեսեդեկ քահանայապետ:

Ինքն էր քահանայից մեծ ճարտարապետ,
 Քեզ կնքահայր ասեն սուրբն Կարապետ:
 Ինչ զըտար ճգնաւորք կան և սուրբ վարդապետ,
 Ինչ զտար Մարտիրոսք կան, սյց արիւնն եղեր գետ,
 Ո՛չ իշխտնք բարեպտշտօնք, ո՛չ Հագարապետք,
 Եօթանասուն և երկու աշակերտք,
 Երեք Հարիւր տասն և ութն Հայրապետք,
 Ինն դաս Հրեշտակք և Հրեշտակապետք,
 Չեն քեզի նման սուրբ Աստուածածին:

Ե.

Օղէն ու կրակէն, Հողէն ու ջրէն,
 Ադամ ստեղծեց Սէլամ աղբիւրէն,
 Քեզ աւելի ըրաւ քան զբիւր Հագարէն,
 Քեզ աւելի ըրաւ քան զՀագար բիւրէն,
 Քեզ աւելի ըրաւ քան Զմովսէս մարգարէն:
 Մովսէս գաւազանաւ ջուր Հանեց քարէն,
 Եսային քաշեցին երկաթ խրզարէն,
 Քեզ աւելի ըրաւ քան զսիրական Ղազարէն:
 Ղազար մեռաւ ու ողջ ելաւ մէզարէն,
 Ալեքսիանոս անցաւ Մարգարիտ եարէն,
 Ննովք դրախտ տնկեց չկերաւ պարէն,
 Նիկողայոս չառաւ ձախ ծիծն ի մօրէն,
 Յովնան ելաւ վիշապ մեծ ձկան փորէն,
 Ու գնաց քարոզել Նինուէի նորէն:
 Նգեկիէլ ողջնցաւ գերեզմանի ձորէն,
 Աչք լուսաւորեց Եսայի մարգարէն,
 Մանասէ ելաւ քառասուն կանգուն Հորէն:
 Որհնութիւն առէք Մակար սուրբ ճգնաւորէն:
 Մէկ մի ալ Նարեկացի սուրբ Գրիգարէն,

Ներսէս Հայրապետէ՛ Լուսաւորչի թոռէն, զի մզմբ
 Բարսեղ Կեսարացի, և փրեմի խուրէն: զյառաջմի բմբ
 Այսօրէն գովելի սուրբ Մխիթարէն, մքմ զստայր շմբ
 Արեգակն արգելող Պարսամ սողրբ ճգնաւորէն, շմբ
 Աղէքսանդր, իսքէնտէր զիլֆի դարայէն, գմուսից շմ
 Իմաստուն Սողոմոն, Իաւիթ մարգարէն: զստամա եյօմ
 Տէրն ուրախացաւ Աբելայ զօչ գառէն, զայիլա՛ր գմցմ
 Որ իջոյց կախ ըրաւ սաբեկայ ծառէն: մի՛ սաբ մմբ
 Չայն զոհ մատուցին Իսահակայ փոխարէն: յբմգ մմԶ
 Յակոբ առաւ զանաղան օրհնէք ի Հօրէն,
 Անոր Համար փախաւ Յեսաւ եղբօրէն:
 Գրիգորն բան ըրաւ անորէն, յիւղի՛ յո մէքԹ
 Որ ինքն ծնաւ ի քրոջ եղբօրէն, յՍ բմԾբմոս Իսքմ
 Երկոտասան տարի քաշեց ապաշխարէն, յյյմա բմԳ
 Մինչև բանալին ելաւ ի ձկան փորէն, յյյ մա բմԳ
 Վերջ իջաւ շնորհքն ի յերկնաւորէն: այց յյյմա բմԳ
 Այնպէս կողորմի Տէրն ի յաթողէն, արաւաթ սխիսՍ
 Քառասուն մանկունք, քանն և չորս մարգարէն, սմ
 Չեն քեզի նման սուրբ Աստուածածին: յյյմա բմԳ

Յովակիմայ գարմէն զքեզ ծնաւ Աննայն:
 Ապա ի քէն ծնաւ Քրիստոս մեր արքայն, յայսրոյից՝
 Յերուսաղէմ, Բեթհեղէմ ի քարայրն Խն, յյյմ մամբոմ
 Աստղ մի երևեցաւ արևու նման, յարոյաց բունք մ
 Աստղին մէջ կոյս մի տասներկու տարեկան, յկկմբմ
 Որուն զիրկը բազմեալ լուսեղէն տղայն: յկկմբմ
 Մէլքոն, Դասպար, Պաղգասար՝ որ յետոյ եկան, յկկմբմ
 Աստղն առաջնորդեց ութն ամսեայ ճամբան, յկկմբմ
 Եկան մէկտեղեցան, դրին մեծ ստեան, յկկմբմ

Հարցաքննում ըրաւ չար Հերովդեայն, յառջմցր մաԳ
 Սրահին մէկ ծայրը փլաւ իւր վրրան, զի սաբ բմմբ
 Այնուհետև աստղն ելաւ երևան: զսայլա զբմոտմբ
 Երեք թագաւորքն այլ եկան տեսութեան, յայսմ շմ
 Ուրոյն ուրոյն ներս մտան երկրպագութեան: յյյ մ
 Ամէնուն ցոյց տուաւ զատ զատ տեսակ բան, յյյ մ
 Հիացան, զարմացան, յապաշ կրթեցան, յառջայլ մ շմ
 Երեքն այլ դարձեալ մտին տեսութեան, յստաւա՛ր բմԳ
 Կուսին Մարիամու զիրկն էր երախայն: ս բմգր մաԳ
 Ապա թէ՛ ծանեան բան ճշմարտութեան, յայս բայթ
 Ոսկի, կնտրուկ, զմուռ բերին ընծայ յարգական, սլմ
 Ուխտաւորքն ալ երկուտասան Հարիւր Հազար ջան, սլմ
 Ամէն ազգ և ազինք քեզ երանի սան: ս մգսպի մ
 Հայր Յովսեփայ նշան Յովակիմ աննայն, յյյմոեյմմ
 Ինչ զտար աշխարհքս որ ստեղծուած կան, յյյմոեյմմ
 Չեն քեզի նման սուրբ Աստուածածին:

Ե.
 Նարդոս, բրբում և մանուշակ այգի՛ այգեստան,
 Զքեզ միշտ գովեն ազգք երկոտանան, յգիլա ա՛շմ
 Դու գերազարդ ծաղիկ, դու ես բուրաստան, մմգ-ոԳ
 Դու ես շուշան ծաղիկ, դու վարդ և ռահան: մմ
 Դու ես ծառ խնկենի, դու վարդ վարդարան, սր մ
 Դու ես Հազար ու մէկ գոյն ծաղիկ անթառամ:
 Դու անսերմն յղութիւն, դու պտղաբերան,
 Հասակդ է եկեղեցի, ծոցդ սուրբ խորան,
 Սուրբ խորանին ծածկոցն է ի վրան:
 Վարդապետք կգովեն զքեզ ի բերան,
 Բերանդ է սկիհ սուրբ Հաղորդութեան:
 Երեսդ է արեգակն աչերդ է ծովան,
 յյստայ ից սովն անգուստաւ:

Քան զհրեշտակաց վեր ունիս կայան:
 Իննը դաս հրեշտակք քեզ բարև կուտան,
 Փնտռեցի աշխարհս չկայ քեզ նման,
 Ոչ Ասիայ կայ և ոչ Յունաստան:
 Ոչ Եթովբիայ կայ և ոչ Ասպահան,
 Ոչ Ամէրիկայ, և ոչ Հնդկաստան,
 Ոչ Արաբեայ կայ և ոչ Պարսկաստան,
 Քեզ հաւասար ասեն Յովհաննէս Մկրտիչ միայն,
 Քան զքեզ աւելի արքայից արքայն:
 Խիստ պակաս գովելոյս եղած իմ փիւշման:
 Այս գովեստ ասողի անունն է Տիւան,
 Մենք ալ վերջացունեմք փառօք Յաւիտեան,
 Ի միասին ասելով զսուրբ հայր մեզայն,
 Անթուելի սուրբեր որք յաշխարհս եկան,
 Չեն քեզի նման մայր պողոմոթեան:

Տիւան

**Ի ԳՐԻԳՈՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԷ Ի ԵՐԳ ԵՐԳՈՅ
 ԳՐՈՅՆ**

Ահա այգիք մեր ծաղկեցան,
 Բուրեն զհոտ անմահութեան,
 Եկ ցանկալի իմ աննման,
 Եւ զուարհացուք ի բուրաստան:
 Բրդիսեն ստինքքդ կաթն և գինի,
 Մեղը ի շրթանցդ քո կաթի.
 Որով հոգիս իմ փափագի,
 Եւ նսւարեալ յոյժ տոչորի:
 Գեղեցկազեղ, քաղցրաբարբառ,
 Սէր քո՝ ունի խորհուրդ անճառ,
 Իմանալի արև պայծառ,
 Լուսաւորեան միտս իմ խաւար:

Դրախտ վայելուչ ծառ պրտողաւոր,
 Քաղցրաճաշակ և զինի նոր,
 Սիրով արբեալ քո ահատոր,
 Ի սենեակին խորհրդաւոր:
 Երևեցան ծաղկունք յերկրի,
 Նստցուք ընդ քեզ ի պարտիզի.
 Երգեցից սէր քեզ սիրելի,
 Սիրտ իմ ի սէր քո տոչորի:
 Զորհանապագ ընդ քեզ կալով,
 Ըզգեղ դիմաց քո դիտելով,
 Եւ խօսակից քեզ լինելով,
 Ըստէպ ստէպ հարիմ տապով:
 Եթէ յաչաց մարմնոյս ծածկիս,
 Մտաց աչօք ինձ երևիս,
 Բնակեալ ես դու յիմում սրտիս,
 Ծրարեալ ունիմ զքեզ ի հոգին:
 Ընտրեալ ոսկի սփեղրական,
 Ակն լուսատու և կարկեհան,
 Տընաղ և կայծ յոյժ պատուական,
 Խնդրեմ զքեզ ես անխափան:
 Թէ տեսանեմ զքեզ կրկին,
 Լուսաւորի միտս իմ մթին:
 Եւ տամ համբոյր շրթանց քոյին.
 Նա վերանամ ես ի յողին:
 Ժուկժկալութիւն չունիմ անգամ,
 Զտիւ, զգիշեր նստեալ ողբամ,
 Վառեալ սիրով քո տապանամ,
 Զաչս ի յանհասս համբառնամ:
 Ի տեսնէ քո արբեցայ,
 Ահեղակերպ լուսոյ արքայ:

Հոգիս բերկրեալ ընդ քեզ «ցնծալ,
 Սիրով ի սէրը կապեցայ:
 Լուսապայծառ երևի նա,
 Որթոց՝ եղանց նման խայտայ:
 Ահա եկեալ ի թեմանայ,
 Զգեստաւորեալ իբոսորայ:
 Խուսկ և հալուէ ծաղիկ դաշտաց,
 Անճառելի հոտ քո բուրեաց,
 Ելից գաշխարհս համատարած,
 Յորմէ մարդիք եղեն արբած:
 Ծաղիկ փրթթեալ յառաւօտու,
 Հոգոյ՛ մարմնոյս իշխանըն գու-
 Լուսաբորբոք ակն արևու,
 Օդ քաղցրութեան ի հարաւու:
 Կարմրացեալ ի գոյն վարդի,
 Ի մէջ ծաղկանց երևելի,
 Բարձրաուղէշ արմաւինի,
 Գլխոյ իմոյ լեր հովանի:
 Հոտ քո անուշ տարածեցան,
 Որպէս զվարդ և զշուշան,
 Դու ես քրքրում և պալասան,
 Քիմք մեր ի քէն պարարեցան:
 Զայն տունը և ինձ որ վարժալի,
 Նուաղեալ հոգիս յոյժ ծարաւի,
 Մարմինս մաշեալ ալլազունի,
 Տեսլեան լուսայ քո սխրալի:
 Դամբարափայլ ճաճանչ ես,
 Որ վառեցեր սիրտ իմ արքեզ,
 Որ միշտ արթուն կայ վասն քո,
 Ո՛չ զատարի սակս լալոյ:

ձեմեալ ընդ քեզ ի Յանդաստան,
 Փափագելով քո սուրբ տեսեան,
 Ահեղակերպ և հրաշագան,
 Աչք մեր ի քէն նուաղեցան:
 Յանկամ տեսանել զքեզ
 Պսակ փառաց լուսեղէն,
 Քեզ իւսեցից տաղիցս երգ,
 Եւ գովեցից հոմերօրէն:
 Փափագիմ վարուցդ անբիծ,
 Տէր Անտօնի թեբայիդէն,
 Քո արարողին տամ օրհնից փառս,
 Օրհնութիւն յաւիտենից և ևս ամէն:

**ՏԱՂ Ի ՔՐԻՏՈՒՄ ԵՍՔՈՒՂԻՒՅՈՒՄԷ
 ԱՂԹԱՄԱՐԱՑՈՑ**

Արեգտկնափայլ գեղով լի,
 Լուսին ի տասնուհինգն է,
 Աչեր ծով ի ծով ունես,
 Սոսկալի վարսաւոր սերովբէ:
 Ունքերդ է քաշած կամար,
 Զինչ գարնան աղեղն ի յամպէ,
 Լեզուդ տապարզի շաքար,
 Քո շրթունքրդ վարդի թերթ է:
 Աստղ վառ ի վառ պայծառ,
 Ելանես ի յառաւօտէ,
 Սքանչելատեսիլ դիմօք,
 Միքայել հրեշտակն ես միթէ:

Չկայ օրինակ այլ քեզ.
 Հողածին քան զքեզ չըբրէ.
 Հազարաց, բիւրոց ընտրեալ,
 Ո՞ր լեզու զքեզ դրուատէ:
 Վարդ ես վայելուչ գունով,
 Յօղ առնուս ի վաղորդայնէ.
 Արևն՝ երբ ի քեզ առնէ,
 Հիանալով զքեզ տեսանէ:
 Հիրիկ, կինամոն, նարդօս.
 Պալասան ի յնդիպտոսէ,
 Քրքուս, և զըմուռ շուշան.
 Դու ազնիւ քան զկուզար հայրէ:
 Հոտով քո արբեալ թմբրիմ,
 Երբ քաղցրիկ հով ի քեզ հնչէ.
 Փընջեալ երփնազարդ ծաղիկ,
 Զքեզ բերած ի բարձր լեռնէ:
 Նդեգնախնկոց նման ես,
 Գտանիս ի լեառն Սինէ.
 Համասփիւռ և մըրտենի,
 Մանուշակ ի կանաչ թփէ:
 Ակն դահանակ սուտակ,
 Ելանես ի Փխոն գետէ.
 Տպազ, մեծագին յասպիս,
 Շափիւղայ լոյսն ի քէն ցայտէ:
 Ակատ, կարկեհան՝ յակինթ.
 Մարգարիտ ելեալ ի ծովէ:
 Մաքուր անարատ ոսկի.
 Նկեալ ես ի յեկլատէ:
 Յապառատ վիմանց քարանց,
 Մեծագին ակունք նորոգէ.

Առեալ ի ցողոցերկնից,
 Ի յոստորէն լմարդարիտ շինէ:
 Մացառաց, ոստոց վիշոց,
 Հոտ անուշ ըզվարդ ընձիւղէ.
 Կազմեալ ի ջրոյ նայանկեր,
 Չէ զարմանք թէ այսպէս առնէ:
 Պատկեր քո ստեղծողին,
 Շաղկապեալ ի քունանիւթէ.
 Տէրն իւր գոյացոյց զքեզ,
 Նկարեալ եհան յարգանդէ:
 Զհարդ օրինակ տամ քեզ,
 Յանշնչից և Յանզգայից.
 Յայս իմ այլած սրտէս,
 Զայս ընծայ ընկ ընդունէ:
 Գրիգոր Աղթամարցին,
 Արտասուք զքեզ աղաչէ.
 Թէ ինձ որոնմի յատէք,
 Եւ Փրկիչն ձեզ պարզեւէ:
 Ինչպէս որ քան զքեզ լինէ
 Իմ արմատն քեզ լինէ իմ

ՏԱՂ ՍԻՐՈՅ ՅՈՂԱՅԱՆՆԻՍ ՓԼՆՈՒՐԱՆՅՈՅ

Արևնման շողողէն յես,
 Գանի սիրով զաչերդ անես.
 Թէ սէր յիշես ու թէ չիշես,
 Ես կու սիրեմ սրտովս զքեզ:
 Ասի սիրէ զիս՝ ծովաչեր,
 Նա ասաց պահեմ զաչս ի վերանց,
 Նիստ որ հայեմ յերեսդ ի վայր,
 Հէրիք կայիւր ինձ յերևանց:

Թէ շատ թէ քիչ ի յետ ձգեմ, որ ի յամռմ
 Մի՛ թէ անցնի՛ հուրս ի խափան, որտայ ի
 Նա սէր ի սիրտս ի ներս կերթայ, որտաստ թատարս
 Ես կու մնամ մեղաց միայն: մի քրտիքից շտմա բռն
 Բերեմ մեղացն զահնս ի մտիս, ի յամերս
 Ու զգո՞ւնոցն հուրն անվախճան, որպէս թ
 Մի թէ անգտն եմ այս կրակէս,
 Որ անվախճան ինձ վառեցան:
 Դու զվէմերն խորտակես, որպիսի զայ միջ թ
 Դու զլերունքն ի հարհանես, զմ յամղայս
 Ով դու սիրով նատ արեր ես, նատ յամիցո քրտիք
 Ասանց կրակով զանձնիկն արես: մտ ի բիշմամ
 Դու օրինակ ես աղերան, ճացրա նի պոս
 Որ մայրն չէ բերեր զէտ քեզ, ածանց պառ
 Սպիտակ ճակատ տէ՛րս զաչեր,
 Լուծֆ ի քարամ ու՛ր լուսեղեն:
 Շար շրթունքովդ վարդ կո՞ւ թափես, թ
 ձոխճան վզովդ բերդերս քակես. մի ի իցֆ մ
 Ամէն անձամբդ ես գեղեցիկ,
 Քաւ՝ էլ թէ քեզ նման դու ես:
 ՅՈՅՏՄԻ Բայց ինչ անեմ ճարակ ջկայ, ԴՍ ԲՄՅ
 Մահու մեղաց ներքե եմ ես.
 Հալիմ ի քեզ, հալիմ ի նա, որոց մանն իցմ
 Որ ի հողոյ ստեղծեր գրեգ: ի սոցիս յամ
 Խե Յովհաննէս Թուրկուրանցի, թե՛ ի սո սոցի զիս թ
 Ջօրն ի բուն ընդալ կասես, սիրտս նմոցս այ՛ սմ
 Ջմարդն ի կրակ կու ձգես, այր ձոցս յամ
 Դուն ազնւոջ ունայն ես: շայս բատս ամ
 Ձէրա չունես իսկի զալատ, այ՛ սմ
 Չկայ ի քեզ մազ մի արատ, զիս

Անձամբդ սուր անտրատ, որպես յայցա՛
 Ես կու գրեմ զիս քեզ յամտող յանցմն զի
 Ու քեզ ծառայ ու քեզ զաքաթ, այս ի իտոսիք ձոցս՛
 Շուշան, ռահան ու մանուշակ. մի տա ձբտ քեզք մ
 Ու նոնօֆար ու սիրկելի, սմ քեզ այր յի
 Նուռն ու նարինջ ու վարմիր վարդ: զի
 Սոցիս թոցր է զրախա անամահութենն,
 Անգէն Սնմահակոն զպողովիլի: զբո՞ն
 Դու աննման ես մէջ աղէկն ունիս քեզք իմ
 Չքեզ սիրէ Աստուած մեծարդ: ոսմցմ նա՛
 Հաբեղանոյն ես որոգայթ, զի թ սց շախ ա գմածյաթ
 Քահանայից ակատ ու զարդ: սց սիտայս ա գոսթ
 Չմիակեցին խելքն տանես, իսք ձոցս բս՛ մ
 Որ կացեր է զորն անարատ: ձմա ձիոս մ
 Խե Յովհաննէս Թուրկուրանցի,
 Սրտի մտք զականջդ բաց: զի
 Ու աստէն արա՛ քեզ ճար շուտով,
 Որով անդէն առնուս պակ
 յիսմն նախ ա զի միջան թ
 ԱՅՈՒ ԲԱՆՔ ՅՈՒՋԱՆՆԵՍԻ թմն սմ
 յսծոցս ծրիս սիր զի քմ նմոցս
 Հանդոյն այլովդ տեսիլ զմրուխտ, ո իցտար նմոցս
 Տալաղիոն ակն ու ջուհար: ոսմս քեզք մ
 Ինձ անկասկած ի դէմ ելաւ, սիրտս զիս
 Շունչս քաշեցրաւ... իցոց սարմոցս ոսցիս
 Չթողիր իլիս համբերութիւն: զբամն սմ
 Քանի տեսնեմ կու սարսափիմ, այս նի սմ
 Սիրտ ի փորկս կանցնու կրծիցս. ս սց շառ
 Ինձ մեղադիր վէր կու լինիք: թ սմ ձոսմ
 Ո՛վ ... ոսմ ձիս զիս միջոց միքսմ

Հարիւր տարու հաբեդանին,
Որ ճերմակն է գարձեր դեղին,
Կտրէ զկօտիկ պատարագին,
Ու զքեզ ուզէ առջև խաչին:

Այլ դու դեղ ես, ուրախութեան,
Որ զքեզ տեսնեն ի բաղջանին:

Ձճամդ ու զվարսերդ ի վայր թողու,
Մոցդ բանաս ի մէջ բաղջին:

Ով զքեզ սիրէ ո՞նց մեռանի,
Կամ երեսուին դառնայ դեղին.

Պարծանք ու վաճ քո ճընողին,
Փառք ու պատիւ քո Արարչին:

Ո՞նց կարէ գովել զքեզ,
Խե Յովհանէս Թուրկուրանցին.

Քեզ վայել է ծառայ Խփտի,
Բուղար, Չարքագ, Հռովմ ու Կատին:

ԱՅՆ ԲԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ

Թէ մահըն չէր ու կամ մեռնիլ,

Ես ունէի շաա բան հոգալու:

Զիշխեմ նդ էր զիս պիղծ գործոյ,

Վախեմ չդատրի աչս իլալու:
Ես զքեզ տեսայ նման լուսոյ,

Զէր արեգակն որ նոր կէլնու.

Սիրտս այրեցաւ բարկ կրակով,

Ես մնացի խե կապելու:

Ես իմ սրտիս դանակ ածեմ,

Զաչքս ճաղի տամ հանելու.

Աստէնս չէ նէ խիստ ամօթով,

Անդէն բաժին կեր զեհէնու:

Բայց չէ շահեր մարդն ի սիրոյ,

Ոչ փառք առեր ի յաստուծոյ.

Աստէնս կենէ զմարդն ամօթով,

Անդէն բաժին կեր զեհէնոյ:

Խե Չովհանէս Թուրկուրանցի,
Մի՛ դներ զքեզ պիղծ բաներու.

Ամէն ոչինչ դադարկ բանի,
Անդէն համար ունիս տալու:

Գեղ համար սուգ եմ մտեր,
Կուլամ հայ մի թափեր վարդ մի:

Օքսուզ Թորոս դայս բանս տաց
Իւխանն հայ զիմ սիրականս

Եարս առին տարին հայ,
Էնոր համար սուգ եմ մտեր կուլամ հայ:

Մի՛ թափիր վարդ, մի՛ թափիր վարդ, մի՛ թափիր.
Ա՛խ այրեցայ սիրոյդ տարտէն մի՛ թափիր:

Ահա ելաւ արքայութեան հովերն
Սէրն այլ նման է յանտակ ճովերն

Պլպուլն չադրր զարկեր վարդին քովերն.
Մի թափիր վարդ, մի թափիր.

Այրեցայ սիրոյդ դարտէն՝ մի թափիր վարդ:
Գուզալմ ես լէրէկ տեսայ,

Ի քաղաքն ի յանքուրեայ.
Թագաւորն էլ իխնդիր եկաւ,

Մոսկովայ ու Փորթուքալայ:

Եկաւ ոսկի թախթ կապեց,
Ու նստան երկունս ի վերայ:
Շարեց զաղուծն ու զմրուծ,
Զպատաշխան քարերն ի վերայ:

Ծխեց տաշխն ու զկինսմոն,
Կնտրուկ ու զհալուէն ի վերայ:
Ի բեր զէն նուան զինին,
Ու ի գիր արմատ փախայ:

Երեսն էր պտրի լուսին,
Լուս կուտէր արմատ ի վերայ:

Երես տեսնելէ ի տուրոս
Սեւանիկ ու Զատրնայ:

Ծով աչերուն զին արար,
Զուսկուղարն և Ղալաթեայ:

Դարձաւ ու փէշքէշ արար,
Շամ քաղաք ու Մսր ի վերայ:

Քաղցրիկ զրոյցին զին ի տուր,
Շահրաղուկ, Պաղտատ, Պասրայ:

Գուզալն էլ ի խօսք ելաւ,
Խօսեցաւ ինչ որ պիտենայ:

Թագաւոր քո գալդ ի բարի,
Քէլափոխդ լիմ գլխուս վերայ:

Էս ինչ լայեղ փէշքաշ որ տուիր,
Քո հաքմուն վերայ . . . :

Սէշանիկ, դու շուռ առնես,
Ատրնայ, քո հիմն երէրայ:

Ուսկուղար քակել առնում,
Ղալաթեայ դու շէն չի մնաս:

Կուտաս Ստամպոլ տուր ինձ,
Վէնէտիկ, կամ Սպանիայ:

Կամ լեզր աստուածածին,
Որ շինուեր է ի Կուկլիանէայ:

Գուզալ դու ի լէն քաղաքէն
Որ կոչեն զանուն Պաւլինայ:

Սօր քեզ ջլտու տուած,
Քաֆայ ու Պուրեայ ի վերայ:

Մէկ ճոթդ ի Յալաբն նստի,
Մէկն Սսիս, մէկն ի Յամասիայ:

Փռանդ քեզնէ հով քաշի,
Գուրջըստան մուծեղ կու կենայ:

Լազկիրն կասկած անի,
Շահն արտէն քան զուռ կու գողայ:

Յաբաշ քեզ զուլուխանէ,
Յընտստան քեզ ճորտ ու ծառայ:

Գուզալ քեզ նման Մոսկով,
Մեծ հոռով պապ կու կենայ:

Շատ սրբոց մարմին կայ,
Կայ դա մարմին Պողոս Պետրոսայ:

Գօզալ քեզ ազէկ թախթ կայ,
Որ անուննի Ըսպանիայ:

Աղէկ ըզթատեղ է նա,
Գերեզման տեսուն Յակոբայ:

Գրդատ ու սուրբ Գրիգոր,
Ի զին խուր եղան հոռոմայ:

Չորս հարիւր մարդ անդ թողին,
Չորս հարիւր առին խուր բատայ:

Փռանկն ուր դաւին վերայ,
Ել կուտայ ծովէն դուրս կուզայ:

Թէ երթանք Երուսաղէմ առնենք,
Յալլազգաց ձեռքն չի մնայ:

Չոռի դուռն յարութենին,
 Կախենք մեր ձեռքն ի վերայ,
 Շուռ տանք Շահաստան,
 Մտնունք մենձ դուրէժ այլ տեղ չմնայ:
 Էլնենք խորասան իջնունք,
 Այլազգաց բունիաթ կայ ի դայ:
 Իջնունք ի Յէջմիածին,
 Տէրն ի բեր զկամարն ի վերայ:
 Ես քուչաքս եմ վանեցի,
 Ի գեղէն խառակոնիսայ,
 Լցեր եմ Հարիւր տարին,
 Էլ չի գար մտքիկս ի վերայ:
 Ով ինձ ողորմի ասի
 Ողջ կենայ ուր կենայ վերայ:

ՏԱՂ ԱՆՈՒՇ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ

Չօխ սավղուզում եղնայ գօզալ,
 Տուր շահրըն սանըն թուրլու թուրլու:
 Ամպար ղոխար Հափի գուլի վարըն սանըն:
 Երուսաղէմ շահրըն գօրդում,
 Ի իլուր մի սան սանտան գառտուք:
 Օլաշտիլար գուտ պտօղ շօլ գօզալ,
 Նըշխարըն սանըն:
 Իսայ ու մարեամ շունտայ դուր,
 Լուս քե չխար թուրվանտայ տուր:
 Ինճիլա փայամ տօլու տուր,
 Պաղչալարտա նառըն սանըն:
 Գօզում տօլու եաշ իջընտայ,

Չանըմ բազար պաղ իջնտայ:
 Գօկարուպ տուր տուզ իջնտայ,
 Հափի բիդար թաղթըն սանըն:
 Բու նա՛ արանչի տուր ադամ օղլին,
 Ու նչօխ տուր՝ սան նայ սան:
 Քրիստոս մի տուր լուսով իլի ճառըն սանըն:
 Արքայութեան դուռն բանան,
 Զարարիչն Աստուած գոհանան,
 Մեր Տէրն իջաւ գետն յորդանան:
 Քրիստոս որդի, գառն սանըն,
 Աստուածածնայ աթոռն բարձր է:
 Մարմին և արիւնըն խացէ,
 Գերեզմանի լոյսն քաղցրէ:
 Դժոխք իլի՛ գառն սանըն:
 Աժդահա օլան Հաստայ տուր:
 Քալամուլլահ մուսայ տուր,
 Մարեամ օղլու եսայ տուր:
 Սէվգուլում սարգարըն սանըն:
 Ապուզամզամ սանտան ախար,
 Համի քրիստոնեայ սանայ պաքար,
 Ժերեզմանէն քի լոյս չըխար:
 Շատ օլուր գուտսղլարըն սանըն:
 Յուզայ ելան պիղատոսի գօտարդիլար Քրիստոսի
 Դաշատիլար Ստեփաննոսի,
 Մուռզառ ջհուտլարըն սանըն:
 Նուաստ Գրիգոր ոտից ձեր հող,
 Միտքս մօլար, աչքս չէ տեսող:
 Զեզ աղաչեմ տաղիս երգող,
 Ասէ ինձ Աստուած ողորմի:

ԿԱՐՁԵԱԼ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՂԹԱՍԱՐՅՈՅԸ

Դուն ես արեգակ լուսին իլլուման,
Չկայ քեզ օրինակ ի յորդիս մարդկան.
Բաշաթ քիշաֆի ու սուֆիքան. հան,
է՛ նա, ուղղիդայ գուլի բաղ բօստան:

Պայծառ արիւնեակ ի յառաւօտու,
ես եմ քեզ փափագ, լիսնէ ես հեռու.

Իմ շուշան ծաղիկ, կարմիր վարդըն դու,
Չըրա դէրա մաթի բէ մարամբէթուն:

Ծաղկեալ գեղեցիկ ոսկի մադրասայ,
Մէհրապ է քաշած գունքերդ է ի նմայ.

